Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1489 – 1494

49.99
S-74

2010

002

1. Schneuwly, Alois-Joh. Schumpfmühle bei Steinen
2. Fluhmann Friedrich Nachf. Schwyz
3. Schmuckenschlacht, E. Sp.-Bez. Lehrer-Steinen unweit
4. Gemeindepräsidium Zwyer Lauerzersee
5. Lehrer Franz, Emsigen Unteriberg
6. Schriftführer, Sp. A. Lauerzersee
Angestellter Zug Alt Bez. Schwyz

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Апрѣля 1877 г

Типографія Мартиросіанца на Орбеліановской улицѣ, д. №. 5

243

ԾԱՐԱԿԱՆՔ

ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՎԵՐԱԾԵՑ

ԵՐՈՒԱՆԴ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

1009/5634

معارف نظارت جلیله‌سنك و مطبوعات داخلیه مدیریت علیه‌سنك
٦٦٨ نومرولی رخصتیله طبع اولنمشدر .

LIBRAIRIE-EDITEUR
Կ. ԳԱԼԵՆՑ
K. GALENTZ
LIBRAIRIE-EDITEUR

Կ. ԳՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.
Գալաթիա, Գլխաւոր փողոց, թիւ 38

1902



ԿԸ ՆՈՒԻՐԵՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՕՐՍ

ՄՀՏԻ. ԳՐԻԳՈՐ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ(*)

ՈՐԴԻ

ՄՀՏԻ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ(**)

100/Յ638

ԵՒ ԹՈՌ

Տ. ԱՆԴՐԷԱՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ(***)

ԵՐՈՒԱՆԴ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

1902 *Հոկտ.* 1
ՍԿԻՒՏԱՐ

(*) Ծնեալ ի Պարսիզակ յամին 1820 եւ մեռեալ յամին 1895
(**) Ծնեալ ի Պարսիզակ յամին 1786 եւ մեռեալ յամին 1858
(***) Ծնեալ ի Պարսիզակ յամին 1761 եւ մեռեալ յամին 1803

109248-42

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Բարեպաշտ եւ եկեղեցասէր հաւատացեալ փոքր ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ, հաւատարմակեցայ աշխարհաբարի վերածել մեր նախնի եկեղեցական սուրբ հայրերու շարականներուն մէկ մասը: Այս առաջին հատորիկիս մէջ ամփոփուած են Ս. Ծննդեան Ճրագալոյցի եւ ութ աւուրց, եւ Տեառնընդառաջի շարականները, գրաբար եւ աշխարհաբար: Երկրորդ հատորով պիտի հրատարակեմ Մեծ Պահոց եօթն կիրակիներու շարականները, նաեւ «Այսօր անձառ»ի կարգը: Երրորդ հատորի մը մէջ պիտի ամփոփեմ Ծաղկազարդի եւ Ս. Յարութեան շարականները, նաեւ Հարութեաց եւ Նստեցեալոց սովորական շարականները, աշխարհաբարը միշտ գրաբար բնագրին հետ: Վերջին չորրորդ հատորով մը պիտի հրատարակեմ Ս. Խաչի վերացման, Վարագայ Խաչի եւ Գիւտ Խաչի շարականները, նաեւ հարանոս տեղեկութիւններ շարականաց հեղինակներուն վրայ: Ջանացիմ կարելի եղածին չափ պարզ եւ դիւրընթերցելի կերպով աշխարհաբարի վերածել: Թէ ո՛ր չափ յաջողած եմ, կը պարտիմ զայն գրաբարի մեր մտաւոր ընթերցման եւ Հ. Ամերիկեանի Շարականաց Մեկնութեան:

Ե. Տ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

ՇԱՐԱԿԱՆՔ
ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԱՆՈՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՀՐԱԳԱԼՈՒՑԻՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԲՁ. (դ)

Ուրախացիր, արքունի, Գաբրիէլի աւետեօքն, որ քարոզեացն զգալուս արքային տեառն ի յերկնից:

Ողջոյն ընդ քեզ, Մարիամ, ի քեզ սուրբ հոգին եկեսցէ, եւ զօրութիւն բարձրելոյն ի վերայ քո հովանեսցի:

Որ ծնանելոցն է ի քեզ իսրայելի առաջնորդ, եւ ընդհանուր քարոզի Աստուած հզօր անմահն բանն:

Ուրախ լեր բերկրեալ ամենասուրբ կոյս, որ ծնար աշխարհի զարդարութեան արեգակն, որ լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան:

Ուրախ լեր բերկրեալ դուռն կնքեալ, որ ծնար աշխարհի զքաւաւորն Քրիստոս, որ նստի ի վերայ աներեւոյթ արոտոյ:

Գեղմն իմանալի զոր տեսս Գեդէոն, յառաջ քան զայս հաւատացեալ իմանալովք զանճառելի զծնունդ, եւ երկրպագեմք որ ի կուսէդ մարմնացաւ Աստուած:

Հ Որ դասուց երկնաւորաց անիմանալի, այսօր
ԺԵ հողեղինաց յայտնեցեր զծածկեալ խորհուրդ,
օրհնեալ տէր Աստուած հարցն մերոց:

Որ բազմաչեայ fոբէից անտեսանելի, կերպացեալ զմեզ ի արբոյ կուսէն տիրինաբար, օրհնեալ:

Որ առաւել բարձրացեալդ ես յաւիտենից, մեծ-չենաբուղխ, լցուցիչ եւ աղբիւր կենդանարար, օրհնեալ:

գ Զտէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ զկերպարանս ծառայի էառ, եւ զմեզս ի մարմնի իւրում դատապարտեաց, անդադար գովելով բարձր:

Որ այսօր մարմնացաւ ի արբոյ կուսէն յաղագս անիծիցն, եւ եբարձ զպատուհաս նախատեղծին, ժողովուրդք առաւել բարձր:

Որ ելն ի բարձունս գերեալ զզօրութիւն մանու, այսօր բաշխի անապականութեան պարգեւք մարդկան, քահանայք հոգեւոր երգով առաւել բարձր:

ա Անկանիցք առաջի fո, Աստուածածին, եւ աղա-
բ չեմք զանարաս զկոյսդ:

Բարեխօսեա վասն անձանց մերոց եւ աղաչեա զմիածին որդիդ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

գ Օրհնեմք զքեզ, Աստուած, ընդ անմարմնոցն դասուց, որ ի բարձունսդ ես բնակեալ, խնայեա ի fո արարածս:

Գովեմք զքեզ միածին որդի եւ բանդ Աստուած, որ ի կուսէն մարմնացար, խնայ:

Բարեբանեմք սուրբ զհոգիդ որ նորոգողդ ես եւ կեանք, եւ միաբան ասացուք փա՛ռք ի բարձունս Աստուծոյ:

դ Ծագումն հրաբալի որ անյայտ էր ի մէնջ եւ բանն
բ հայրական անբմբռնելի, հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ, անվնաս պահելով զարարածս ամենայն:

Ծագումն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ, նաւագայթելով զարարածս ամենայն, երկինք ցնծային եւ երկիրս ուրախանայր, եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ:

Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի, գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց, աղաչիր ես ծառաւեաց եւ հանգիստ աշխատելոց, եւ եղեր վերնկալ աստուածային բանին:

ՃԾ Զանգառելի լուսոյ մայր եւ զբնակարան անբա-
ՀՅ կզբնակից որդւոյն օրհնութեամբ մեծացուցանիմք:

Զանհաս տնօրէնութեան մայր, եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ բանին, օրհ:

Զբոլորից փրկութեան մայր, որ զանտանելին էից. ի յարգանդի եբարձ, զնա ամենեքեան օրհ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՆ

Ուրախ եղիր, ո՛վ սրբուհի, Գաբրիէլի բարի լուրին վրայ, որ քարոզեց երկնաւոր թագաւորին գալուստը:

Ողջո՛յն քեզ, ո՛վ Մարիամ, սուրբ հոգին քու վրայ պիտի գայ, և բարձրեալ Աստուծոյ զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քու վրայ:

Նա որ պիտի ծնի քեզմէ Իսրայէլի առաջնորդն է, բայց աշխարհի ամէն կողմերը պիտի քարոզուի նաև իբրև հզօր Աստուած, և իբրև անմահ բանն Աստուծոյ:

Ուրախ եղի՛ր և ցնծա՛, ո՛վ ամենասուրբ կոյս, որ արդարութեան արեւը ծնար աշխարհի համար, ա՛յն արեւը որ մարդկային ազգը լուսաւորեց։

Ուրախ եղի՛ր և ցնծա՛, ո՛վ կնքուած դուռ, որ աշխարհի համար ծնար Քրիստոս Թագաւորը, որ անձեռագործ աթոռի վրայ կը նստի։

Կը հաւատանք թէ ասկէց առաջ Գեդէոնի տեսած հոգեւոր գզաթը այս անպատմելի ծնունդին նշանն էր, և կ'երկրպագենք Աստուծոյն որ քեզմէ՝ կոյսէդ մարմին առաւ։

Դու որ անիմանալի ես երկնաւոր հրեշտակներուն, այսօր հողեղէն մարդոց յայտնեցիր մարդեղութեան ծածուկ խորհուրդը, օրհնեալ ես, ո՛վ մեր հայրերուն տէր Աստուածը։

Դու որ բազմաչեայ քերովբէներուն անտեսանելի ես, սուրբ կոյսէն մեր կերպարանքը առիր աստուածային կարգադրութեամբ, օրհ։

Դու որ յաւիտենապէս բարձր ու փառաւոր ես, մշտաբուխ և կենդանարար աղբիւր, և կը լեցնես մարդկային կարօտութիւնը, օրհ։

Օրհնեցէք Տէրը, և ի սպառ փառաւորեցէք զայն։

Միշտ գովեցէք և փառաւորեցէք զայն որ ծառայի կերպարանք առաւ, և իր մարմնոյն վրայ ջնջեց ադամական մեղքը։

Ո՛վ ժողովուրդներ, փառաւորեցէք զայն որ այսօր սուրբ կոյսէն մարմին առաւ ադամական անէծքին պատճառաւ, և վերցուց նախաստեղծին տրուած պատիժը։

Ո՛վ քահանաներ, հոգեւոր երգով փառաւորեցէք զայն որ երկինք եւաւ մահուան ոյժը գերի տանելով, և որ այսօր մարդոց կը բաշխուի իբրև անապական պարգև։

Ո՚ Կը խոնարհինք քու առջեւդ, ո՛վ աստուածածին, և կ՚աղաչենք անարատ կոյսիդ։

Բարեխօսէ՛ մեր անձերուն համար, և աղաչէ՛ միածին որդւոյդ։

Որպէս զի փորձութիւններէ փրկէ զմեզ, ինչպէս նաև մեր բոլոր վտանգներէն։

Ս Կ՚օրհնենք զքեզ, ո՛վ Աստուած, անմարմին հրեշտակներուն հետ. քու արարածներուդ խնայէ՛ դուն որ երկինքը կը բնակիս։

Ո՛վ միածին որդի և բանդ Աստուած, կը գովենք զքեզ, որ կոյսէն մարմին առիր. խնայէ՛ քու արարածներուդ։

Կը դրուատենք զքեզ, ո՛վ սուրբ հոգի, որ կը նորոգես և կեանք կուտաս, և միաբերան ըսենք, փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակիս։

ՄԿ Հրաշալի ծագումը (Քրիստոս), որ մարդոցմէ անտեսանելի էր, հօր Աստուծոյ անըմբռնելի բանը (Քրիստոս), կրակի պէս երկինքէն փայլատակելով մարդկային մարմինի մէջ բնակեցաւ, առանց ո և է ինաս պատճառելու արարածներուն։

Նոյն հրաշալի ծագումը կոյսէն ալ ծագեցաւ լուսաւորելով բոլոր արարածները, երկինք կը խայտար և երկիրը կ՚ուրախանար, որովհետեւ Քրիստոս Աստուած մարդոց հետ պտըտեցաւ, անոնց մարմինն առնելով։

Քու բարեխօսութեանդ կ՚ապաւինինք, ո՛վ սուրբ Մարիամ, որ բոլոր արարածներէն բարձր ես, հրաշալի

ես, բարի՛ք կը սփռես, ծարաւիներուն աղբիւր ես, և յոգնածներուն ալ հանգստարան, որովհետև արգանդիդ մէջ ընդունեցիր Քրիստոսը։

ձԵ Օրհնենք ու փառաւորենք անպատմելի լոյսին մայրը, որ Աստուծոյ էակից որդւոյն բնակարան եղաւ։

Աստուածային անհասանելի կարգադրութեան մայրը, և Աստուածորդւոյն կենդանի տաճարը։

Ամենքս կ'օրհնենք ու կը փառաւորենք բոլոր արարածներուն փրկութեան մայրը, որ իր արգանդին մէջ կրեց զայն զոր բոլոր արարածները չէին կրնար իրենց մէջ բովանդակել։

ԿԱՆՈՆ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌԱՋՆՈՅ ԱՒՈՒՐՆ

---

42 Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր
43 յայտնեցաւ, հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան
44 աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթլեհեմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեաւ, եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծոյ, եւ հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ:

Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն, եւ ընդ հրեշտակս երգին փառք ի բարձունս Աստուծոյ:

Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս, արդարութեան արեգակն տէր փառք քեզ:

Ծնար ի յայրին, ընծայեցար Բեթլեհեմ, ար:

Հովուաց յայտնեցար երկրպագեալդ ի մոգուց, ար:

Եւ մեք երգեսցուք զի ի կուսէն մարմնացար, ար:

45 Անսկիզբն էակից բանդ հօր, որ էիր յառաջ քան
46 զյաւիտեանս, եւ եկիր ի փրկութիւն ստեղծուածոց
քոց, զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց:

Ծնար ի կուսէ անճառ միութիւն, անբաժանելի եւ միօս գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ, զքեզ:

Ցնծութեամբ սօնեսցուք զծնունդ քո սուրբ, որ յայտնեցար մեզ լոյս ի լուսոյ, եւ լուսովդ քո լցեր զտիեզերս, զքեզ:

գ Գործք տեառն զտեր օրհնեցէք, եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Զծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք, եւ:

Զանճառելի զծնունդդ փրկչին գովեցէք, եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

դ Ուրախ լեր աստուածածին, յոյս եւ փրկութեան մայր, զքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք:

Զքեզ լուսոյ մայր եւ կոյս, զքեզ գանձդ կենաց աստուածային, ձայնիւ ցնծութեամբ մեծացու:

Մայր սուրբ անարատ լուսոյն, հրեշտակային օրհնութեամբ պատուեալ զքեզ մեծացու:

ե Ամենիմաստ ամենից հայր բազմազեղ խնամող ստեղծող եւ տէր բոլորից, անեղ եւ էիցս էակ, զոր միշտ օրհնեն դասք անմարմնականացն յաւէժաբար հրճշմամբ:

Որ կերպարան եւ կնիք հօր, առեալ վասն մեր ծառայի կերպ ի կուսէն, որ էն ի յաթոռ փառաց անտես վերնոցն, ի յայրին իջեվանի եւ ի մառր անբանից բազմեալ:

Զ'ի կուսէն մարմնացեալ բանն եկայք ժողովուրդք ընդ հովիւսն բարեբանեսցուք, եւ ընդ մոգուցն երկրպագեսցուք, ընդ երկնային զորսն երգեսցուք փա՛ռք ի բարձունս Աստուծոյ:

զ Ճառագայթ եւ կերպարան էութեան հօր բանդ Աստուած, զքեզ բարեբանեմք ասելով, փա՛ռք ի բարձունս Աստուծոյ:

Որ միացար ի մարմնի անճառապէս ճշմարիտդ Աստուած զքեզ :

Որ զանիծիցն բարձեր զդատապարտութիւն , Քրիստոս Աստուած , զքեզ :

ՃԵ Սուրբ զաստուածածինն օրհնութեամբ մեծացու-
Ի ցանեմք :

ԻՅ Աւետաւոր հրեշտակն աւետարաներ զծնեալ փրկիչն ի արքոյ կուսէն :

Ասէ ուրախ լեր բերկրեալդ , բանզի տէր տերանց է ընդ քեզ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՜րքան մեծ և զարմանալի է այն խորհուրդը որ այսօր յայտնուեցաւ , հովիւները հրեշտակներուն հետ կ՝երգեն , բարի լուր կուտան աշխարհի ։

Բեթլէհէմ քաղաքին մէջ ծնաւ նոր թագաւոր (Քրիստոս) . ո՛վ մարդիկ , գոհութիւն մատուցէք , որովհետև մեզի համար մարմին առաւ ։

Լաթի կտորուանքներու մէջ փաթթուեցաւ նա զոր երկինք ու երկիր չէին կրնար կրել , հօրմէն չբաժնուելով նոյնաւ Բեթլէհէմի սուրբ պանդոկին մէջ ։

Այսօր երկնային հրեշտակները կը խայտան վերէն , մեծ ու փառաւոր լուրը տալով , և բոլոր արարածները փրկութեան զգեստ հագան ։

Այսօր աստուածորդին Քրիստոս նուէրներ ընդու-

նեց պանդոկին մէջ , և հրեղէն հրեշտակներուն բազում գունդերը երկինքէն երկիր իջան ։

Այսօր հովիւները արդարութեան արեւը տեսնելով հրեշտակներուն հետ կ՝երգէին , փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի ։

Ո՛վ Տէր , արդարութեան արև , փառաւորեալ եղի՛ր , որ հօր Աստուծմէ ծագեցար արարածները լուսաւորելու համար ։

Պանդոկին մէջ ծնար , ընծաներ ընդունեցիր Բեթլէհէմի մէջ , ո՛վ Տէր , արդարութեան արև , փառաւորեալ եղի՛ր ։

Հովիւներուն յայտնուեցար , մոգերէն երկրպագութիւն ընդունեցիր , ո՛վ Տէր , արդա ։

Մենք ալ երգեր երգենք քեզ , որ կոյսէն մարմին առիր , ո՛վ Տէր , արդա ։

Հ Ո՛վ անակիզք և հօր Աստուծոյ հետ էակից եղող բան (Քրիստոս) , որ յաւիտենապէս կայիր աշխարհի գոյութենէն առաջ , եկար հիմա փրկելու քու արարածներդ , կ՝օրհնենք զքեզ , ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Կոյսէն ծնար , ո՛վ անպատմելի միութիւն , առանց բաժնուելու և միշտ նոյն մնալով հայրական ծոցէն չզատուեցար , կ՝օրհնենք ։

Ուրախութեամբ ուսնե՛նք քու սուրբ ծնունդդ , որ լոյս յայտնուեցար մեզի լոյս Աստուծմէն , և քու լուսավդ լեցուցիր սիրտերքը , կ՝օրհնենք ։

Ո՛վ սիրող արարածներ , զոհութիւն մատուցէք սիրող , և ի սպառ փառաւորեցէք զայն ։

Օրհնեցէք զայն որ սուրբ կոյսէն ծնաւ , և ի սպառ փառաւ ։

Գովեցէք փրկչին անպատմելի ծնունդը, և ի սպառ փառաւորեցէք զայն։

Ա Ուրախ եղի՛ր, ո՛վ աստուածածին, որ յոյս եւ քեզի ապաւինողներուն և փրկութեան մայր ես. կը փառաւորենք զքեզ որ լոյս Քրիստոսը ընդունեցիր։

Ուրախութեամբ կը փառաւորենք զքեզ ո՛վ կոյս և լոյսին մայրը, աստուածային կեանքին գանձարանը։

Ո՛վ անարատ լոյսին սուրբ մայրը, հրեշտակային օրհնութեամբ կը պատուենք և կը փառաւորենք զքեզ։

Բ Ո՛վ ամէնուն ամենիմաստուն հայրը, որ բոլոր արարածները բազում գթութեամբ կը խնամես, դու ո՛չ մէկէն ստեղծուեցար, այլ բոլոր արարածները ստեղծեցիր. անմարմին հրեշտակները կ'օրհնեն զքեզ մշանջենաւոր ձայնով։

Նա որ հօր Աստուծոյ կերպարանքն ու դրոշմն էր, մեզի համար ծառայի կերպարանք առաւ կոյսէն. նա որ հրեշտակներուն անտեսանելի է և փառքի աթոռին վրայ կը նստի՝ Բեթլէհէմի պանդոկին մէջ կ'ինջնէ և անբան անասուններուն մսուրին մէջ կը նստի։

Ո՛վ ժողովուրդներ, եկէք հովիւներուն հետ գովաբանենք կոյսէն մարմին առնող բանը, և մոգերուն հետ երկրպագութիւն ընենք անոր, և երկնային զօրքերուն հետ երգենք. թող փառաւորեա՛լ ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի։

Տ Ո՛վ բանդ Աստուած, որ հօր Աստուծոյ բուն կերպարանքն ու անոր ճառագայթն ես, կը գովաբանենք զքեզ ու կ'ըսենք. փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի։

Ո՛վ ճշմարիտ Աստուած որ անպատմելի կերպով

մարդկային մարմինին միացար, կը գովաբանենք զքեզ ու կ'ըսենք. փառա։

Ո՛վ Քրիստոս Աստուած, որ ադամական անէծքին դատավճիռը վերցուցիր, կը գովաբանենք զքեզ ու կ'ըսենք. փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի։

ՃԵ Օրհնե՛նք ու փառաւորե՛նք սուրբ աստուածածինը։

Բարի լուր տուող հրեշտակը կը քարոզէր սուրբ կոյսէն ծնած փրկիչը։

Կ'ըսէ. ուրախ եղի՛ր և ցնծա՛, որովհետև երկրաւոր տէրերուն տէրը քեզի հետ է։

ԿԱՆՈՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

Ա Այսօր բանն ի հօրէ անմեկնելի եւ անճառելի
Գ խորհրդով, ի ձեռն կուսական որովայնի տնօրի-
Ղ նաբար յերկրի երեւեալ:

Մանուկ անժամանակ ի հօրէ անսերմն ի կուսէ, ի գիրկս մօր զգուեցաւ այսօր արարիչն երկնի եւ երկրի:

Ո՞ր մարեցաւ զյորդանան եւ լուաց զմեղս աշխարհի, զոր օրհնեն անդ ադար արարածք ամենայն զհակիցն հօր եւ հոգւոյն:

Լոյս ի լուսոյ ծագեալ ի հօրէ, եւ լուսաւորեաց զտիեզերս, ծնունդ անապական յանսուտեր լուսոյն, զոր միշտ փառաւորեն դասք անմարմնոցն:

Ցայսմի է ի հրեշտակաց Աստուած եւ ի Բեթլեհեմ ծնեալ յայրին, մանուկ անժամանակ ի հօրէ, եւ ժամանակաւ զոյացեալ ծնեալ լինի Աստուած եւ մարդ:

Եւ հովուացն տեսեալ զիրաւալի ծագումն աստեղն, փութապէս եկեալ տեսին մանուկ յանբասից մսուր, զոր միշտ փառաւորեն դասք անմարմնոցն:

Եկդա եւ ուրախ լեր անհարսնացեալ Մարիամ, քանզի որ ի քեզ ծնաւ փրկիչ՝ տէր է օծեալ ի քաղաքի Դաւթի, զոր միշտ փառաւորեն դասք երջանիկ հովուացն:

Է Ի կուսական որովայնէ ծնեալ մարմնով որ յա-
Ի ռաջ քան զյաւիտեանս բանդ ի հօրէ երգեցուք,
տէր Աստուած, փառաւորեալ է անուն քո:

Ի քերովբէս բազմեալ բնդ հօր անսկիզբն որդի անճառաբար տոյացեալ ի խանձարուրս պատեցար. երգեմ:

Ամենայն բարութեանց տուող ազգի մարդկան, եւ ի մոգուցն այսօր ընծայեցար. երգեսս:

Զ Զսկր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ յանճառելի աթոռ ընդ հօր փառակից բանն ի յերկրի երեւեցաւ. օրհ:

Որ ի կուսէ անապական բազուռոր ծնաւ Քրիստոս, եւ ի հրեշտակաց անդադար փառաբանի Աստուած. քահանայք օրհնեցէք:

Ը Լոյս լուսոյ մայր եւ կենարար բանին բնակարան, քեզ երանիցեն ազգ եւ ազգին ամենայն:

Ստեղծողին մայր եւ հնութեան կերպի նորոգողին, քեզ երա:

Լոյս ծագեցաւ ի քեզ նստելոցս ի խաւարի, քեզ երա:

Թ Զահաւոր բարբառս վերնոցն հոգեւոր հնչմամբ երգով, ընկալեալ հովուացն օրհնէին զծնունդ եւ զծագումն յանմեկնելի լուսոյն:

Հրեշտակապետին աւետիսն ընթացեալ ի յայրն տեսին զի նուաստացեալ էր անտեսն սերոբէից, մանուկ եղեալ յանբանից մուր:

Դիտելով մոգուցն զփայլումն աստղն, սա զԱստուած գուշակեալ լինի, զի ի տեսիլ մարմնացելոյն ժամանեալ նմա մատուցանելով զերկրպագութիւն:

Ժ Դասք անմարմնականք երկնաւոր զօրացն ի մէջ հովուացն օրհնէին զծագումն լուսոյ մեծին ի հօրէ մեզ իջեալ:

Եւ մոգքն աստղք նշանաւ եկին ի Բեթլեհեմ երկրպագին տեառն եւ ի յայրին մատուցին զընծայս խորհրդոյ:

Եւ հովիւքն երգեն ընդ հրեշտակս փա՛ռք ի բարձունս մեծիդ Աստուծոյ, որ եկիր եւ փրկեցեր զտիեզերս քոյով յայտնութեամբդ:

ՀԵ Ամենագովելի եւ քաղցրագոյն, որ
ԻԹ զանձնասանելի զտերն յորովայնի քում կրեցեր եւ
ցնծութիւն աշխարհի ծնար. վասն որոյ ամենեքեան
զքեզ միտս մեծացուցանեմք:

Ամենապայծառ բերկրեալ միտս կոյս, որ զանբա-
ւելի զբանն անճառաբար յղացար, եւ զմարմնացեալն
Աստուած ծնանելով ի քեզ. վասն որոյ:

Ի լեռնէ վիմն առանց ձեռին հատեալ, Դանիէլ
գուշակեաց զանսերմն զծնունդդ քո հարսն երկնաւոր,
մայր եւ յետ ծննդեան մնալով կոյս. վասն որոյ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՆ

Այսօր բանն Աստուած անբացատրելի և անպատմելի խորհրդով, կուսական որովայնին միջոցաւ երկրի վրայ երեւցաւ աստուածային անօրինութեամբ։

Այսօր երկնքի և երկրի արարիչը մօր մը գրկին մէջ փայփայուեցաւ իբրև մանուկ, որ հօր Աստուծմէն առանց ժամանակի և կոյսէն ալ առանց սերմի ծնաւ։

Նա որ մաքրեց Յորդանանը և լուաց աշխարհի մեղքը, բոլոր արարածներէն անդադար կ'օրհնուի իբրև հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ էակից։

Լոյս Քրիստոսը լոյս Աստուծմէն ծագելով ամենքերքը լուսաւորեց, ինք որ ծնած էր անխաւար լոյսէն. անմարմին հրեշտակները միշտ կը փառաւորեն զայն։

Բեթլէհէմի պանդոկին մէջ ծնելով իբրև Աստուած կը յայտնուի հրէաստանի մէջ. հօր Աստուծմէ առանց ժամանակի ծնած, այսօր ժամանակով կը ծնի իբրև Աստուած և իբրև մարդ։

Եւ հովիւները ասողին զարմանալի ծագումը տեսնելով, փութով եկան անբան անասուններուն մսուրին մէջ տեսնել մանուկը, զոր միշտ կը փառաւորեն հրեշտակները։

Ուրախ եղիր և հրճուէ՛, ո՛վ Մարիամ, որ ամուսին չճանչցար, որովհետև քեզմէ ծնած փրկիչը օծեալ թագաւոր է, զոր միշտ կը փառաւորեն երջանիկ հովիւները։

Ի Երգեր երգե՛նք քեզ, ո՛վ բանդ Աստուած, որ հօրմէն ծնար յաւիտենապէս, աշխարհի գոյութենէն առաջ, և հիմակ ալ մարմինով ծնար կոյսին որովայնէն. ո՛վ տէր Աստուած, քու անունդ փառաւորեալ է։

Երգեր երգե՛նք քեզ, ո՛վ անակիզը որդի, որ հօր Աստուծոյ հետ քերթէնելուն վրայ կը նստիս, և անպատմելի կերպով մարդ ըլլալով լաթի կտորուանքներու մէջ փաթթուեցար. ո՛վ տէր Աստուած, փառա։

Երգեր երգե՛նք քեզ, որ մարդկային ազգին կուսաս ամէն բարութիւնները, և այսօր նուէրներ ստացար մոգերէն. ո՛վ տէր Աստուած, փառա։

Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն։

Օրհնեցէք և փառաւորեցէք բանն Աստուածը, որ հօրը հետ միևնոյն փառքով անպատմելի աթոռին վրայ ըլլալով՝ երկրի վրայ երևեցաւ։

Ո՛վ քահանաներ, օրհնեցէք Քրիստոսը, որ անապական կոյսէն թագաւոր ծնաւ, և իբրև Աստուած անդադար կը փառաբանուի հրեշտակներէն։

Ի Ո՛վ լոյս Քրիստոսին լոյս մայրը, և կենդանաբար բանին բնակարանը, զոր ազգերն ու ցեղերը քեզի երանի պիտի տան։

Դու որ մայր եղար ստեղծողին և ադամական հին կերպարանքը նորոգողին, բոլոր ազգերն ու ցեղերը քեզի երանի պիտի տան։

Քեզմէ լոյս ծագեցաւ մեզի որ խաւարի մէջ նըստած էինք. բոլոր ազգերն ու ցեղերը քեզի երանի պիտի տան,

Ո Հովիւները հրեշտակաց հոգեւոր երգերուն ահաւոր ձայները լսելով կ'օրհնէին Քրիստոսը, որ ծնաւ և ծագեցաւ հոր Աստուծոյ անբաժանելի լոյսէն։

Հրեշտակապետին տուած բարի լուրին վրայ պանդոկը վազելով, տեսան որ խոնարհած էր նա որ սերոբէներէն անտեսանելի է, և իրրև մանուկ՝ անբան անասուններու մսուրին մէջ զետեղուած էր։

Մոգերը տեսնելով ասողին փայլիլը, հասկցան թէ անիկա կը ցուցնէ որ Աստուած ծնած է, որպէսզի հասնին շուտով և տեսնեն մարմին առնողը, և երկրպագութիւն ընեն անոր։

Ո Երկնաւոր զօրքերուն անմարմին դունդերը հովիւներուն մէջտեղ կեցած կ'օրհնէին մեծ լոյսը (Քրիստոս), որ հօրմէն ծագեցաւ զմեզ փրկելու համար։

Եւ մոգերը ասողին նշանին վրայ Բեթլէհէմ գալով երկրպագութիւն ըրին տիրոջ, և պանդոկին մէջ անոր մատուցին խորհրդաւոր նուէրները։

Եւ հովիւները կ'երգեն հրեշտակներուն հետ. փառաւորեալ եղի՛ր, ո՛վ մեծդ Աստուած, որ երկինքը կը քնակիս, որ եկար և յայտնուելով տիեզերքը փրկեցիր։

Ո Ո՛վ Մարիամ, որ կը գովուիս ամէնէն և երկնային հրեշտակներէն ալ բարձր ես, որ քու որովայնիդ մէջ կրեցիր անիմանալի տէրը, զոր աշխարհի ուրախու-

թեան համար ծնար. ուստի մենք ամենքս միշտ կը փառաւորենք զքեզ։

Ո՛վ դու, որ բոլորովին պայծառ ես և ուրախ, և միշտ կոյս մնացիր, որ անպատմելի կերպով յղացար անչափելի բանն Աստուածը, և քեզմէ ծնար մարմին առնող Աստուածը. ուստի։

Ո՛վ երկնաւոր հարս, Դանիէլ մարգարէն դուշակեց թէ առանց սերմի պիտի ծնէիր դուն, ասոր իրաւ նշան ցոյց տալով այն քարը, որ լեռնէն փրթաւ առանց մարդու գործակցութեան (Նաբուգոդոնոսորի երազին մէջ), մայր եղար և կոյս մնացիր ծնելէդ վերջն ալ. ուստի մենք ամենքս միշտ կը փառաւորենք զքեզ։

ԿԱՆՈՆ ԵՐՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

Ա. Էակից հօր եւ հոգւոյն անսկիզբն որդի, անմայր յառաջնումն անդրանիկ եւ ընդ հօր յաւիտեան:

Ի ծոցոյ հօր առաքեալ եղեալ ի մսուր անբանից, բանդ Աստուած յայտնեալ:

Քրիստոս ծնեալ ի քաղաքի Դաւթի, քարոզեն հովիւքն ընդ հրեշտակս, եւ մոգք հանդերձ աստեղբն:

Որ զմարմնացեալն տիրաբար ի յորովայնի հուսկ կրեցեր, ուրախ լեր, անհարսնացեալ մայր:

Որ զանտանելին էից ի յարգանդի անապականաբար կրեցեր, ուրա:

Որ զարարչակից բանն գոյացեալ ստուգապէս աշխարհի ծնար, ուրա:

Գ. Սքանչելագործ Աստուած զքեզ բարեբանեմք, որ ի քրիստական աթոռդ նստիս, Աստուա՛ծ հարցն մերոց:

Որում ոչ բաւեն երկինք ընդունել զանբաւելի ըզբնութիւնդ, յարգանդի կուսին բնակեցար, ծնար անճառապէս, Աստուած հարց:

Ցոր վեցթեւեանն սրբէին, ոչ իշխեին հայել ի քո աստուածութիւնդ, տեսանելով ի գիրկս կուսին զարմացեալք օրհնէին զքեզ, Աստուած հարց:

Դ. Զսքր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ ի կուսէ անապական թագաւոր ծնաւ Քրիստոս Աստուած, յորմէ դողան իմանալի զօրութիւնքն, օրհնեցէք ժողովուրդք եւ բարձր:

Որ մկրտեցաւն ի յորդանան եւ լուաց զտիեզերս ի մեղաց, վկայեալ ձայնիւ հօր եւ երեւմամբ սուրբ հոգւոյն, օրհնեցեալ բանայք, առաւել բարձրացուցեալ զնա յաւիտեան:

Ա Աստուածածին սուրբ կոյս անհարսնացեալ Մարիամ, որ օրհնեալդ ես ի կանայս, զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք:

Անապական տաճար եւ առագաստ լուսոյ, ի քեզ փեսայացեալ բանն կենաց բնակեցաւ, զքեզ:

Հուրն կենդանի որ ի մարենին վառեցաւ, զոր անվնաս յարգանդի քում կրեցեր եւ ծնար Աստուած եւ մարդ, զքեզ:

Բ Որ կերպարան հօր եւ արարչակից բանդ, վասն փրկութեան ազգի մարդկան այսօր ի կուսէ զկերպարանս ծառայի զգեցար մարդասիրապէս, զոր ամենակեցոյց գալստեամբդ ողորմեա՛ մեզ Աստուած:

Որ յանմահոյց լուսոյ ծածկեալ բնդ հօր եւ սուրբ հոգւոյն, ի հոբէականն հանգչէիր յաթոռ, այսօր խանձարրոք պատեցար եւ յանբանից մտուր եղար, մարդասիրապէս:

Որ եկիր ի փրկութիւն ազգի մարդկան բազուռ փառաց զո անհան խոնարհութեամբդ, այսօր զմեղօք դատապարտեալ անձն իմ ի մահ ճորոգեա ի կեանդ յաւիտենից, մարդասիր:

Գ Քրիստոս ծնեալ այսօր ի Բեթլեհեմ ի յայրին, եւ դասք վերին զուարթունցն սոսկացեալ զարմացեալ կային, զի տեսին մարմնով ծնեալ զքանն Աստուած:

Նոր սքանչելիք եղեն այսօր ի Բեթլեհեմ 'ի յայրին, կուսի ծնանիլ Աստուած եւ մարդ, անապական մնալով կուսական որովայնին, զի տեսին:

Աստղն գուցակեր մոգուցն առ ի բերել զընծայս աստուածութեանն, եւ հովիւքն ընդ հրեշտակս երգէին ասելով, փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, որ առաքեաց ի փրկութիւն մեզ զբանն Աստուած:

ՃԾ Անսկզբնական բանին հօր ընակարան, տաճար
Ֆ եւ առագաստ տեղի անտանելի լուսոյն, զքեզ
Ր մեծացուցանեմք արժանապէս երգով, աստուա-
ծայր եւ կոյս:

Ցորմէ կենդանաստեղծեալք յանէրեն հաստեցան ամենայն եղականքն, անսերմնապէս տղայացաւ յորովայնի քումմ, եւ ծնաւ առ ի քեզ մարմնացեալ Աստուածն բոլորից, զքեզ:

Ցորմէ զարհուրեալ դողային դասք վերին զուարթունցն, տղայապէս առ ընկալեալ բարձեր ի գիրկս, եւ արբուցեր որպէս մայր սացողին զքեզ զկուսական քո առուրբ զկաթն, զքեզ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՆ

Ո՛վ անսկիզբ որդի, որ հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ էակից ես, առաջին անգամ առանց մօր ծնար հօր Աստուծմէ իբրև միածին, և յաւիտենապէս հօր Աստուծոյ հետ ես:

Ո՛վ բանդ Աստուած, հօր ծոցէն զրկուելով յայտնապէս դրուեցար անբան անասուններու մառին մէջ:

Հովիւները հրեշտակներուն հետ և մոգերը աստղին հետ կը քարոզեն թէ Քրիստոս ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ:

Ուրախ եղի՛ր, ո՛վ մայր, որ ամուսին չճանչցար, և քու որովայնիդ մէջ կրեցիր զայն որ մարմին առաւ իր ազատ կամքով։

Որ առանց ապականութեան արգանդիդ մէջ կրեցիր զայն, զոր չեն կրնար կրել աշխարհի բոլոր արարածները, ուրախ եղի՛ր, ո՛վ մայր, որ ամուսին չըճանչցար։

Որ ստուգիւ կեանք տալով ծնար զայն, Բանը, որ աշխարհի ստեղծագործութեան մասնակից է. ուրախ եղիր ո՛վ մայր, որ ամուսին չճանչցար։

Հ Կը գովաբանենք զքեզ, հրաշագործ Աստուած որ քերովբէներու աթոռիդ վրայ կը նստիս, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Կոյսին արգանդին մէջ բնակեցար և անպատմելի կերպով ծնար դուն, որուն անչափելի բնութիւնը չի կրնար կրել երկինք, ո՛վ մեր։

Վեցթեւեան սերովբէները չէին համարձակեր քու աստուածութեանդ նայիլ, հիմա կոյսին գրկին մէջ տեսնելով զքեզ զարմանքով կ'օրհնէին, ո՛վ մեր։

Օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն։

Ո՛վ ժողովուրդներ, օրհնեցէք և փառաւորեցէք Քրիստոս Աստուածը, որ անապական կոյսէ թագաւոր ծնաւ, որմէ կը գողան երկնային զօրքերը։

Ո՛վ քահանաներ, օրհնեցէք և ի սպառ փառաւորեցէք զայն որ Յորդանանի մէջ մկրտուեցաւ և տիեզերքը մեղքերէն լուաց, հօր Աստուծոյ ձայնը վկայեց և սուրբ հոգին երեւցաւ։

Ա Ո՛վ աստուածածին սուրբ կոյս Մարիամ, որ ամուսին չճանչցար, կիներուն մէջ օրհնուած ես դուն։

զքեզ միշտ կ՚օրհնենք և կը փառաւորենք, որովհետև արժանի ես։

Անապական տաճար ես դուն և լոյսին բնակարանն ես, կեանք տուող բանն Աստուած փեսայանալով քու մէջդ բնակեցաւ. զքեզ միշտ կ՚օրհ։

Առանց ձեռաւորելու քու արգանդիդ մէջ կրեցիր կենդանի կրակը, որ Մովսէսի տեսած մորենիին մէջ վառեցաւ, և զայն ծնար իբրև Աստուած և մարդ. զքեզ միշտ կ՚օրհ։

Ո՛վ բանդ Աստուած որ հօր Աստուծոյ կերպարանքը կը կրես և ստեղծագործութեան մասնակից եղար, այսօր ալ մարդկային ազգին հոգևոր փրկութեանը համար մարդասիրութեամբ ծառայի կերպարանք առիր կոյսէն. ո՛վ Աստուած, ողորմէ՛ մեզի չնորհիւ քու գալուստիդ որ կեանք կուտայ ամէնուն։

Դու որ հօր Աստուծոյ և սուրբ Հոգիին հետ անմատչելի լուսով ծածկուած՝ քերոբէներու աթոռին վրայ կը հանգչէիր, այսօր մարդասիրութեամբ լաթի կտորուանքներով փաթթուեցար, և անբան կենդանիներու մսուրին մէջ դրուեցար. ո՛վ Աս։

Դու, ո՛վ փառաւոր թագաւոր, որ անպատմելի խոնարհութեամբ եկար մարդկային ազգին հոգիները փրկելու, այսօր ալ մարդասիրութեամբ յաւիտենական կեանքովդ նորոգէ՛ իմ անձս, որ մեղքերով մահուան դատապարտուած է. ո՛վ Աստուած, ողորմէ՛ մեզի չնորհիւ քու գալուստիդ որ կեանք կուտայ ամէնուն։

Այսօր Քրիստոս ծնաւ Բեթլէհէմի պանդոկին մէջ, և երկնային հրեշտակներուն դունդերը սարսափած զարմացած կը մնային, որովհետև տեսան որ բանն Աստուած մարմինով ծնած էր։

Այսօր նոր հրաշք մը տեղի ունեցաւ Բեթլէհէմի պանդոկին մէջ. կոյս մը մէկը ծնաւ որ թէ՛ Աստուած է և թէ մարդ, և իր կուսական որովայնն ալ անապական մնաց, որովհետև։

Աստղը նշան մ'էր մոգերուն՝ աստուածութեան յատուկ ընծաներ բերելու համար, և հովիւները հրեշտակներուն հետ կ'երգէին ըսելով. փառաւորեա՛լ թող ըլլայ Աստուած որ երկինքը կը բնակի, և բանն Աստուածը զրկեց զմեզ փրկելու համար։

ՁԵ Ո՛վ սուրբ կոյս որ բնակարան եղար անսկիզբ Աստուածորդւոյն, և անչափելի լոյսին տաճար եղար և ներքին սենեակ. արժանաւոր երգերով կը փառաւորենք զքեզ իբրև աստուածամայր և իբրև կոյս։

Առանց սերմի քու որովայնիդ մէջ յղացաւ նա որմէ ստեղծուեցան բոլոր արարածները՝ ինք առանց ստեղծուած ըլլալու, և բոլոր արարածներուն Աստուածը քեզմէ ծնաւ մարմին առնելով. արժանաւոր երգերով կը փառաւորենք զքեզ իբրև աստուա։

Գրկիդ մէջ առնելով կրեցիր իբրև մանուկ զայն որմէ կը տոկային և կը դողային երկնային հրեշտակները, և քու կուսական սուրբ կաթիդ իբրև մայր խնամեցուցիր անոր որ զքեզ ստեղծեց. արժանաւոր երգերով կը փառաւորենք զքեզ իբրեւ աստուածամայր և իբրեւ կոյս։

ԿԱՆՈՆ ՁՈՐՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ Այսօր Գաբրիել ցնծութեամբ երգեաց արբոյ կու-
ԿՅ սին աւետիս բերկրեաց ասելով, որ ծնաւ զփրկիչ
Ը կիչ անձանց մեռոց :

Անբաւելին երկնի եւ երկրի ի կուսական արգանդ մեզ կենսիք յայտնեցաւ, Աստուած այցելու մարդկան :

Ցառաջընթաց փայլումն լուսատեսիլ աստեղն մոգուցն հետեւելով նշանի ի ծնունդ աստուածորդւոյն :

Այսօր Գաբրիել հրեշտակն ցնծութեամբ երգեաց առ կոյսն սուրբ, ասէ, ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ:

Այսօր աւետիք հրեշտակապետին ցնծութեամբ լցին զկոյսն սուրբ, քանզի էջ միածինն յարգանդ կուսին :

Այսօր տիեզերք պայծառացան աւետօք արբոյ կուսին, քանզի բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ :

Հ Որ ի ծոցոյ հօր բանդ Աստուած անսկիզբն, յար-
ՐԻ գանդի կուսին բնակիլ յանձն առեր, զքեզ բարեբանեմք Աստուած հարցն մեռոց :

Որ յանարուեստս արոտ նստիս եւ ընդ հօր ես յետքեան, յանբանից մտուր եղար բազաւոր փառաց, զքեզ:

Որ ի քառակերպիցն երեքարբեան ձայնիւ անդադար օրհնաբանիս, ի մոգուց պատարագօք պատուեցար յայրին, զքեզ :

Զ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

Զբազաւորն անմահն Քրիստոս զեկեցից հօր եւ հոգւոյն որ տգայթգաւն այսօր յանարատս ի սուրբ կուսէն փրկելով զմեզ, ժողովուրդք օրհ :

Արարիչն արարածոց Քրիստոս փառակից հօր եւ հոգւոյն, այսօր մկրտիլ ի յանձն էառ ի ձեռաց հողեղինին՝ արբելով զմեզ, քահանայք օրհնեա:

Ը Զքեզ աստուածածին աղբիւր անսպառ լուսոյն որ լուսաւորէ զհաւատացեալս, միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:

Դու պարծանք կուսութեան մարդկան, դու ուրախութիւն հրեշտակաց, դու բարձող անիծիցն, վասն որոյ զքեզ աստուածածին մեծացուցանեմք:

Դու ճշմարիտ արեւելք արեգականն արդարութեան յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց, միա:

Ա Զքեզ աղաչեմք անսկզբնականից հօր որդի, որ այսօր նախ աստեղծին բնութեամբ ի կուսէն ծնար Աստուած եւ մարդ, ողորմեա մեզ:

Առ քեզ պաղատիմք էակից հօր որդի որ այսօր ի մսուր եդար եւ ի հրեշտակաց պատուեցար Աստուած եւ:

Ի քեզ հայցեմք ճշմարիտ սուրբ հոգի, որ այսօր աղաւնակերպ երեւմամբ յայտնեցար աշխարհի Աստուած, ողորմեա մեզ:

Ը Որ ի հրեղէն աթոռ ընդ հօր ես բնակեալ եւ ի հրեշտակաց ապաստաւորեալ, այսօր կամաւ հօր ի յերկրի երեւեցար մարմնով կուսական ծննդեամբ, զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք:

Ցարմէ զարհուրեալ դողան սրբոքազունդ ջոկք աթոռոց, բեւեռոքելով ծածկեն զերեսս իւրեանց, այսօր տղայնբար ի կուսական ստեանցն կերակրեցար մարդասիրապէս, զքեզ:

Որ յանպատում փառաց խոնարհեցար յերկիր, նախատակիր եղեր հողեղէն բնութեանս, այսօր զմեղուցեալ

զնախահայրն կենագործեցեր ի կեանսդ յաւիտենից մարդասիրապէս, զքեզ :

ՃԵ Զքեզ կոյս եւ մայր եւ բնակարան աստուածա-
ԲՅ յին ներմարդութեան, զոհաբանեմք եւ վերօրհ-
Ի նեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդ-
կան, վասն որոյ զքեզ աստուածածին եւ կոյս բարեբանեմք զմայր եւ զաղախին փրկչին մերոյ :

Ծնունդն հօր եւ հինաւուրց անժամանակն յաւիտենից, ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ եւ ի հօրէ ոչ մեկնեցաւ, վասն որոյ զքեզ :

Ծնեալն ի քեզ ի խաչ ելեալ, եւ ի յաթոռ փառաց ընդ հօր, անարգեալ ի մարդկանէ, փառաւորութեամբ հրեշտակեալ, վասն :

Զքեզ ոչ միայն որդիք մարդկան՝ այլ եւ վերին զօրութիւնք, դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զբուրարբնոց եւ հրեշտակաց, զոհաբանեն եւ վերօրհնեն եւ փառաւորեն զմայր եւ զաղախին փրկչին մերոյ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այսօր Գաբրիէլ հրեշտակը ուրախութեամբ բարի լուր մը երգեց, «ուրախ եղի՛ր» ըսելով սուրբ կոյսին, որ մեր անձերուն Փրկիչը ծնաւ :

Աստուած մարդոց այցելութեան եկաւ, և նա զոր երկինք և երկիր չէին կրնար կրել, կոյսին արգանդէն երեւան եկաւ իբրեւ կենդանաւոր :

Մոգերը հետեւեցան իրենց առջեւէն գացող լուսաւորեալ աստղին, աստուածորդւոյն ծնունդին նշանն համարելով զայն :

Այսօր Գաբրիէլ հրեշտակը ուրախութեամբ երգեց սուրբ կոյսին, ըսաւ՝ ուրախ եղի՛ր և խնդա՛, Տէրը քեզի հետ է։

Այսօր հրեշտակապետին տուած բարի լուրը խընդութեամբ լեցուց սուրբ կոյսը, որովհետև Աստուծոյ միածին որդին կոյսին արգանդին մէջ իջաւ։

Այսօր աշխարհ համօրէն ուրախութենէն փայլեցաւ սուրբ կոյսին տրուած բարի լուրին վրայ, որովհետև բանն Աստուած մարմին եղաւ և մեր մէջ բնակեցաւ։

Հ Ո՛վ անսկիզբ բանդ Աստուած, որ հօր ծոցէն ծնունդ առիր, հիմակ ալ յանձն առիր կոյսին արգանդին մէջ բնակիլ. կը գովաբանենք զքեզ, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Ո՛վ փառաւոր թագաւոր, որ անձեռագործ աթոռի վրայ կը նստիս, և հօր Աստուծոյ հետ էակից ես, այսօր անբան անասուններու մսուրին մէջ դրուեցար. կը գովաբանեմք։

Մոգերէն պատուուեցար պանդոկին մէջ դու զոր կ՚օրհնեն միշտ չորեքկերպեան հրեշտակները, երեք անգամ աղաղակելով, սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ. կը գովա։

Օրհնեցէք Տէրը, և ի սպառ փառաւորեցէք զայն։

Ո՛վ ժողովուրդներ, օրհնեցէք և ի սպառ փառաւորեցէք Քրիստոս անմահ թագաւորը, որ հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ էակից է, և այսօր սուրբ կոյսէն ծնաւ և զմեզ փրկեց։

Ո՛վ քահանաներ, օրհնեցէք և ի սպառ փառաւորեցէք արտրածներուն արարիչ Քրիստոսը, որ հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ միևնոյն փառքն ունի, և այսօր յանձն առաւ հողեղէն մարդու ձևերէն մկրտուիլ և սրբեց զմեզ։

Ը Միաբերան երգերով կը փառաւորենք զքեզ ո՛վ աստուածածին, անապառելի լոյսին աղբիւրը, որ հաւատացեալները կը լուսաւորէ։

Դու մարդոց մէջ կուսութեան պարծանքն ես, դու ուրախութիւն պատճառեցիր հրեշտակներուն, դու աղամական անէծքը վերցուցիր. ուստի, ո՛վ աստուածածին, կը փառաւորենք զքեզ։

Արդարութեան արեւը ճշմարտապէս քեզմէ ելաւ, և քեզմէ ծագում առաւ տիեզերքին փրկութիւնը. միաբերան երգերով կը փառաւորենք։

Ա Կ'աղաչենք քեզի, ո՛վ որդի, որ հօրդ պէս սկիզբ չունիս, և այսօր Ադամին բնութեամբ կոյսէն ծնար թէ՛ իբրև Աստուած և թէ իբրև մարդ. ողորմէ՛ մեզի։

Կը պաղատինք քեզի, ո՛վ որդի, որ հօրդ հետ նոյն էութիւնը ունիս և այսօր մասուրին մէջ դրուեցար եւ հրեշտակներէն պատուուեցար թէ՛ իբրեւ Աստուած և թէ՛ իբրեւ մարդ. ողորմէ՛ մեզի։

Կը խնդրենք քեզմէ, ո՛վ ճշմարիտ սուրբ Հոգի, որ այսօր աղաւնիի պէս երեւելով՝ իբրեւ Աստուած յայտնուեցար աշխարհին. ողորմէ՛ մեզի։

Ց Դու որ հօր Աստուծոյ հետ հրեղէն աթոռի վրայ կը բնակիս և հրեշտակներն իբրեւ ապատաւոր կը գործածես, այսօր հօր Աստուծոյ յօժարութեամբ երկրի վրայ մարմնով երեւցար կոյսէն ծնելով. անմարմին հրեշտակներուն հետ զքեզ միշտ կ'օրհնենք ու կը գովենք։

Քեզմէ կը զարհուրին և կը դողան սերովբէներուն գունդերը, եւ իրենց թեւերով երեսնին կը ծածկեն. քայց այսօր ի նշան քու մարդասիրութեանդ տղու մը պէս կոյսին ստինքներէն կերակրուեցար, անմար։

Դու որ անպատմելի փառքէդ երկրի վրայ իջար, մեր հոգեղէն բնութեան ախտերը կրնցիր, այսօր մարդասիրութեամբ յաւիտենական կեանքիդ մէջ նորոգեցիր մեղաւոր Ադամը. անմար։

ՃԵ Կ'օրհնենք ու կը գովենք զքեզ, ո՛վ կոյս, աստուածային մարդեղութեան մայր ու բնակարան, որ մարդկային ազգին կենդանութեան գործիքը եղար. ուստի կը գովաբանենք զքեզ, ո՛վ աստուածածին եւ կոյս, մեր Փրկչին թէ՛ մայրը և թէ աղախինը։

Հօր Աստուծոյ ծնունդը, որ յաւիտենական է եւ անժամանակ է, ժամանակի մը համար քու որովայնիդ մէջ բնակեցաւ, բայց հօր Աստուծմէ չզատուեցաւ. ուստի կը գովաբան։

Քեզմէ ծնածը թէև խաչ եղաւ, սակայն հօր Աստուծոյ հետ փառքի աթոռին վրայ էր. թէև մարդոցմէ անարգուեցաւ, սակայն իր աստուածային էութեան համար հրեշտակները երկրպագութիւն կ'ընէին և փառք կուտային անոր, ուստի կը գովաբ։

Ո՛չ միայն մարդիկ, այլ և երկնային զօրքերը, անմարմին, հոգեղէն, հրեղէն, արթուն հրեշտակներուն գունդերը կը գովաբանեն, կ'օրհնեն և կը փառաւորեն զքեզ, մեր Փրկչին թէ՛ մայրը և թէ. աղախինը։

ԿԱՆՈՆ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ Այսօր որ յաթոռ փառաց ընդ հօր ծնանի ի սրբ-
ԹՅ բոյ կուսէն, մարմնացեալ բանն ծնանելով ըզ-
Բ տիեզերս յորդեգրութեան ճնորհս:

Այսօր անպարագրելի բանն հօր բազմի ի մսուր անբանից բոլորից տրեն, եւ ի վերայ հերովբէից հանգչի:

Որ նոյն ինքն է ճառագայթ փառացն հօր, ի յովհանէն հայցեր մկրտիլ ի յորդանանու յորձանսն, առաքելական կոչմամբ զտիեզերս հրաւիրելով:

Զծնեալն ի սրբոյ կուսէն ընկալցուք ի սիրտս մեր հաւատով, որպէս երբեմն ի գիրկսն Սիմէոնն:

Օրհնեցուք զառաքեալն ի հօրէ, որ ի խանձարուրս պատեցաւ վասն մեր, եւ փրկեաց զմեզ յանիծից Ադամայ:

Ուրախ լեր անապատս ծարաւի եւ ծաղկեա հաւատով երանութեամբ յայսմիսիկ, քանզի Քրիստոս յոյս յայտնեցաւ հեթանոսաց:

Հ Որ յանճառելի ծոցոյ հօր էութենէ ծագեցար ա-
ԹԻ րեգակն արդարութեան անսկիզբն Աստուած,
զքեզ ընդ հրեշտակսն քարեբանեմք Աստուած հարցն մերոց:

Որ խոնարհեցար յերկնից փրկել զարարածս անյեղապէս, մարմնացար ի կուսէն էակից բանդ հօր, զքեզ:

Որ ի խանձարուրս պատեցար անեղանելիդ, ոչ մեկնելով յանէրնից փառաց հօր, իսկակից սուրբ հոգւոյն, զքեզ:

Զ Զտեր միաբանութեամբ օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան :

Զառաքեալն ի ճօրէ զբանն եւ զմարմնացեալն ի կուսէն զանփնելին , միաբանու :

Զծնեալն ի արքոյ կուսէն եւ յանբանից մաուր եղեալ զհաց կենաց , միաբանու :

Զերկրպագեալն ի մոգուց եւ զմկրտեալն 'ի յորդանան ի յովհաննէ , միաբանու :

Ը Աստուածածին եւ արքունի որ զբանն Աստուած անսերմն յղութեամբ յարգանդի կրեցեր , անդադար երգով մեծացուցանեմք :

Զքեզ մայր կուսութեան եւ յղութեան լուսոյ , եւ առագաստ անճառելոյ բնակողին ի քեզ փեսայացեալ բանին , անդա :

Քեւ լուծան կնիք դատապարտութեան , եւ քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրն զլորեալ , վասն որոյ զքեզ աստուածածին եւ կոյս , անդա :

Ո Որ էրն ի սկզբանէ առ Աստուած եւ Աստուած բանն , կերպարանն անեղին եւ համագոյ սուրբ հոգւոյն , ի վերջին աւուրս ծանուցեալ , մարմնանալ յանձն առնու ի կուսական արգանդէ , վասն փրկութեան ազգի մարդկան :

Ցառաջ քան զյաւիտեանս որդի նախայաւիտեան , այսօր յերկրի երեւեալ Աստուած եւ մարդ կատարեալ , խանձարրոք պատի , եղանի եւ դնի յանբանից մաուր , վասն :

Ի Բեթլէհէմ հրէաստանի երեւի արդարութեան արեգակն , այսօր երկրպագի անեղն յարեւելից եկեալ մոգուցն , եւ փառաբանի յերջանիկ ի բացօթեայ հովուացն , վասն :

ՏԵ Որ անտես եւ անքննիկ խառակերպիցն վեհագոյն, ի փրկել զմեզ եկեալ անմահից թագաւորն, օրհնութիւն առաքողին :

Առաքի հրեշտակապետն առ սերոբէն հողեղէն, ասէ տէրն եւ արարողն առաքեալ ի հօրէ մարմնանալ ի քէն փրկողն :

Մկրտի ի յորդանան վկայելով հօր եւ հոգւոյն, ոլորանցնա ի բարձունս երգեցին մանկունքն օրհնութիւն որդւոյ Դաւթի :

ՁԵ Անքարամ ծաղիկ անդաստարտս շառաւիղ, վեր-
ԲՅ բաբուսեալ յարմատոյն յեսսեայ, զքեզ եսայիաս
Ի կանխաւ վերագոչեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան գոլ. աստուածածին եւ կոյս, զքեզ մեծացուցանեմք :

Համեղանաբակ պտղոյն բանաւոր բարուցակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անապատ յուրախութիւն տրամեցելոցն ի նաբակմանէ ծառոյն գիտութեան. արբունի անուրաս, ամենեքեան զքեզ :

Քաղաքավարեալ ի մարմնի անարատս վարուք, այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ, բարեխօս խոստովանողացս. զքեզ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՆ

Այսօր բանն Աստուած, որ հօր Աստուծոյ հետ փառքի աթոռին վրայ նստած է, սուրբ կոյսէն կը ծնի, եւ մարմին առնելով ամբողջ աշխարհս ալ իր որդեգրութեան շնորհքին մէջ կը ծնի :

Այսօր Աստուածորդին, որ տեղ մը չի բովանդակեր, բոլոր արարածներուն տէրը, անբան կենդանիներու մսուրին մէջ կը նստի, բայց կը հանդչի քերովբէներուն վրայ։

Նա որ իր հօր փառքին ճառագայթն է, կը խնդրէր որ Յովհաննէս զինքը մկրտէ Յորդանանու ջուրերուն մէջ, և ամբողջ աշխարհը կը հրաւիրէր՝ յատկապէս զրկուած ըլլալով Աստուծոյ կողմէն։

Հաւատքով մեր սիրտերուն մէջ ընդունինք զայն որ սուրբ կոյսէն ծնաւ, ինչպէս երբեմն Սիմէոն ընդունեց իր գրկին մէջ։

Օրհնենք հօր Աստուծմէ զրկուածը, որ մեզի համար լաթի կտորուանքներու մէջ փաթթուեցաւ, եւ Ադամի անէծքէն փրկեց զմեզ։

Ուրախ եղի՛ր, ո՛վ անչրդի անապատ, և այսուհետև չէնցի՛ր երանութիւն տուող հաւատքով, որովհետեւ Քրիստոս կռապաշտներուն լոյս յայտնուեցաւ։

2 Ո՛վ անակիրդ Աստուած, արդարութեան արեւ, որ հօր Աստուծոյ էութեան անբացատրելի ծոցէն ծագեցար. հրեշտակներուն հետ կը գովաբանենք զքեզ, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Որ առանց ոեւէ փոփոխութեան երկինքէն իջար արարածները փրկելու, և դուն որ հօր Աստուծոյ հետ նոյն էութիւնն ունիս, մարմին առիր կոյսէն. հրեշտակներուն հետ զքեզ կը գովաբանենք։

Դուն որ ո՛չ մէկէն ստեղծուած ես, և սուրբ Հոգիին հետ նոյն բնութիւնը ունիս, լաթի կտորուանքներու մէջ փաթթուեցար, չբաժնուելով հօր Աստուծոյ անքննելի փառքէն. հրեշտակներուն հետ զքեզ։

Միաբերան օրհնեցէք տէրը և ի սպառ փառաւորեցէք զայն։

Բանն Աստուածը, որ հօրմէն ղրկուեցաւ և անքննելի կերպով կոյսէն մարմին առաւ, միաբերան օրհ։

Զայն որուն մոգերը երկրպագութիւն ըրին, եւ որ Յովհաննէսէն մկրտուեցաւ Յորդանանու մէջ, միաբերան օրհ։

Ա Ո՛վ աստուածածին և սուրբ Մարիամ, որ արդանդիդ մէջ կրեցիր բանն Աստուածը առանց սերմի յղանալով, անդադար երգերով կը փառաւորենք զքեզ։

Որ կուսութեամբ մայր եղար և լոյսը յղացար, և քեզի միաւորուող և անբացատրելի կերպով քու մէջդ ապրող բանն Աստուծոյ ներքին սենեակ եղար, անդա։

Քեզմով քակուեցաւ ադամական դատապարտութեան վճիռը, և քեզմով ոտք ելաւ դարձեալ մեղքով գլորող մայրը (Եւան). ուստի ո՛վ աստուածածին և կոյս, անդա։

Ա Նա որ սկիզբէն Աստուծոյ քով էր և բանն Աստուած էր, սուրբ Հոգւոյն հետ նոյն գոյութիւնն ունէր, և կերպարանքն էր հօր Աստուծոյ որ ոչ մէկէն ստեղծուած է, որոշեալ ժամանակին մէջ յանձն ի՛ առնէ կուսական արգանդէն մարմին առնել մարդկային ազգը փրկելու համար։

Բոլոր ժամանակներէն առաջ և յաւիտենապէս գոյութիւն ունեցող որդին՝ իբրև կատարեալ Աստուած և մարդ այսօր երկրի վրայ երեւելով՝ լաթի կտորուանքներով կը փաթթուի, մարդ կ'ըլլայ և անբան կենդանիներու մսուրին մէջ կը դրուի, մարդկային ազգը փրկելու համար։

Արդարութեան արեւը Բեթլէհէմի մէջ կ'երեւի, ո՛չ

մէկէն ստեղծուածին այսօր երկրպագութիւն կ'ընեն աբեւելքէն եկող մոգերը, և կը փառաւորեն զայն բաց դաշտի վրայ ապրող երջանիկ հովիւները։

ՏԵ Օրհնեա՛լ ըլլայ այն որ մեր փրկութեանը համար ղրկեց անմահ և չարեքկերպեան վեհ հրեշտակներէն անքննելի և անտեսանելի թագաւորը։

Հողեղէն արօրէին (Մարիամու) կը ղրկուի հրեշտակապետը, որ կ'ըսէ անոր. արարածոց տէրն ու աբարիչը ու փրկիչը հօր Աստուծոյ կողմէ ղրկուելով մարմին կ'առնէ քեզմէ։

Յորդանանու մէջ կը մկրտուի, հայր Աստուած և հոգին Աստուած կը վկայեն, մանուկները կ'երգէին. օրհնեալ ըլլայ Դաւիթին որդին։

ՁԵ Ո՛վ անթառամելի ծաղիկ, Եւայի դատապարտութենէն ղերծ բողբոջ, որ Յեսսէի արմատէն բուսար. Եւայի մարդարէն կանուխ աղաղակեց թէ դուն սուրբ Հոգիին եօթն շնորհքներուն ընդունարան պիտի ըլլաս. ո՛վ աստուածածին և կոյս, կը փառաւորենք զքեզ։

Համեղ պտուղին (Քրիստոսի) հոգեւոր որթատունկն ես դուն, քեզմէ կթեցինք մենք անապառելի ողկոյզը, որ ուրախացուց զանոնք որք ճաշակած էին գիտութեան ծառին պտուղէն. ո՛վ անարատ արքունի, ամենքս կը փառաւորենք զքեզ։

Անարատ վարքով մարմնաւոր կեանքդ վարեցիր, և այսօր առաքեալները Աստուծոյ հրամանաւ ամփոփեցին քու մարմինդ և փոխադրուեցար քու որդւոյդ և մեր Աստուծոյ արքայութիւնը, բարեխօս ըլլալու մեզ ամէնուս որ կը ճանչնանք զքեզ։

ԿԱՆՈՆ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ Անսկզբնական տեսիլ փառաց քոց տուող, որ ի
ԳՅ մեզ հրաւագործեցաւ երեւելով անճառաբար
Ի ծնունդ, այսօր ցնծութիւն յայտնեցաւ տիեզերաց:

Անմարմնական հոգեղինացն երգակցելով բոցեղէն փայլմամբ, թափանցիկ հրածին ամպոյն սիւն դորձեալ յայրին, այսօր դասակից եղեն հովիւքն հանդիսի վերնոցն:

Ընդհանուր ծաւալեցաւ ծագումն լուսոյ, մոգուցն հետեւելով աստեղբն գուսակեալ զծնունդ յայրին, անդ մատուցանէին զընծայս աստուածային ծննդեանն:

Որ յեւթեանդ ես ընդ հօր եւ սուրբ հոգւոյն անսկիզբն որդի, խոնարհեցար ի հայրական ծոցոյ, մարդ եղեալ մարմնացար ի կուսէն, բառնալով զյաղթումն մահու յանցանաց նախահօրն, քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակացն ի մէջ հովուացն, օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան բանդ:

Այսօր ծնար որ ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդի, նառագայթ փառաց եւ ծագումն յանմեկնելի լուսոյն, աստղագուսակ տեսլեամբն յայրին իջեւանի եւ 'ի մսուր անբանից բազմեալ, քեզ երգեմք:

Թագաւոր փառաց Քրիստոս եւ արարիչ բոլորից, Աստուած հզօր իշխան հայր հանդերձեալ լուսոյն, մանուկ երեւեալ այսօր անփոփոխելիդ ի յեւթեան, քեզ երգեմք:

Հ Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ բնակիլ յար-
ԳԻ գանդի կուսին, Աստուած հարցն մերոց:

Որ գթացար յերկիր եւ ծնար անախտ, ազատելով զախտի զծնունդս, Աստուած հարցն մերոց:

Բարեբանեմք զեակիցդ հոր եւ հոգւոյն անդադար հոգեւոր երգով, Աստուած հարցն մերոց:

գ Զառաքեալն ի հոր լոյս իմաստութիւն եւ բան, զեակիցն հոր եւ հոգւոյն, օրհնեցեք եւ բարձր արարք:

Զծնեալն ի արքոյ կուսին զխոստովանեալ թագաւորն, զերկրպագեալն ի մոգուցն, օրհ:

Որ իջանելով ի ջուրսն արբեաց զյորդանան, եւ զմկրտեալն ի յովհաննէ, օրհ:

ա Որ զանճառելին ծնար սուրբ աստուածածին կոյս, օրհնեալ ես յաւիտեան:

Որ զարարչակիցն հոր զ'ի սկզբանէ զբանն Աստուած յարոյցեալն հաւք կրեցեր, օրհ:

Զքեզ եղեկեալ ետես երկնային դուռն եւ հարսն անփորձ, օրհ:

ո Հրաշափառ ծնունդդ քո ի սուրբ կուսին այսօր
ե ցուցաւ ազգի մարդկան, անսկզբնականն բանդ եակիցդ հոր:

Ցայսմ սուրբեամբ քո տեր ցնծացաւ երկիր, եւ նորոգեալ եղեւ Ադամ յառաջին յանցանաց ի մեղաց իւրոց:

Դասք հովուացն յերկրի փառաւորեին զքո՝ ամենակեցոյց գալուստդ, որ երեւեցար քո արարածոցս:

ս Այսօր յայտնեցաւ մեզ բարձրեալն բազմեալ բանն յանբանից մսուր, գառն եւ երկնաւոր հաց:

Այսօր ցնծան զուարթուն երկնից տեսանելով զանհաւոր զահագին եւ զհրաշալի ծնունդն, որ լոյս աշխարհի ցուցաւ:

Ընդ իջանել զուարթնոցն ի փառաբանութիւն, տե-

աանեին ամպ լուսոյ սիւն գործեալ ի հրալից վիմին, դասք երջանիկ հովուացն :

ՀՇ Զքեզ հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն
ԲՅ դասք անմարմնոց հրեշտակաց, ձայնիւ երգով
Ժ գոչեն եւ աղաղակեն՝ Ասուած ասուածոց եւ տէր տերանց փրկիչ գոլով :

Առաքեցեր զքո միածինդ մարմնանալ ի սուրբ կուսէն եւ անարատ ծնանիլ յորովայնէ անապական, բառնալով զմեր նեղութիւնս, Ասուած :

Շնորհք բորի յերուսաղէմ երեւեցաւ հեթանոսաց, զի արարիչն յաւիտենից տղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ, Ասուած :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քու փառքդ ցոյց տուող անակնկալ տեսիլը (Քրիստոս), որ զարմանալի կերպով մեր մէջ երեւցաւ, անբացատրելի կերպով ծնելով, այսօր բոլոր աշխարհի ուրախութիւն պատճառեց։

Այսօր անմարմին հրեշտակները բոցեղէն պայծառութեամբ միասին երգեցին, և իրենց լուսաւորութեան թափանցիկ հրեղէն ամպը սիւն մը ձեւացուց պանդոկին մէջ, և հովիւներն ալ մատնակից եղան երկնաբնակներուն հանդէսին։

Մագած լոյսը ամէն կողմ ծաւալեցաւ, մոգերը աստղին հետեւեցան, որ կը ծանուցանէր պանդոկին մէջ կատարուած ծնունդը, և հոն կը մատուցանէին աստուածային ծնունդին նուէրները։

Ո՛վ անակիզք որդի, որ հօր Աստուծոյ և սուրբ Հոգւոյն հետ նոյն էութեան մէջ ես, հայրական ծոցէն վար իջար, մարդ ըլլալով մարմին առիր կոյսէն, նախահօր (Ադամին) մահառիթ յանցանքին յաղթութիւնը կատարեցիր. հովիւներուն մէջտեղ կեցած հրեշտակային գունդերուն հետ կ'երգենք և կ'ըսենք. օրհնեալ ես դուն, ո՛վ Քրիստոս քանզի Աստուած, որ ամէն ժամանակներէ առաջ յաւիտենապէս գոյութիւն ունիս։

Այսօր ծնար դուն որ յաւիտենապէս հօր Աստուծոյ որդին ես, անոր փառքին ճառագայթն ես, և անբաժանելի լոյսին ծագումն ես. աստղին միջոցաւ գուշակուած սեսիլքով պանդոկին և անբան կենդանիներուն մսուրին մէջ կը բազմիս. հովիւնե։

Ո՛վ Քրիստոս, փառաւոր թագաւոր, և տէր բոլոր արարածներուն, աստուած, հզօր, իշխան, և երկնաւոր լոյսին հայր, այսօր իբրև մանուկ երեւցար առանց փոփոխութիւն կրելու էութեանդ մէջ. հովիւներուն։

Հայրական ծոցէն վար իջար կոյսին արգանդին մէջ բնակելու համար, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Մեղքցար այս աշխարհին, և առանց ախտի ծնար, ախտաւոր մարդիկը ազատելով. ո՛վ մեր։

Մինչ հոգեւոր երգեր երգելով կը գովաբանենք զքեզ, որ հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ նոյն էութիւնն ունիս. ո՛վ մեր։

Օրհնեցէք և փառաւորեցէք զայն որ հօրմէն ղրկուեցաւ, իմաստութիւնը, լոյսը, քանականութիւնը։

Զայն որ սուրբ կոյսէն ծնաւ և իբրև երկնաւոր թագաւոր կը դաւանինք, և որուն երկրպագութիւնը ընենք մոգերը։

Որ Ջուրերուն մէջ իջնելով սրբեց Յորդանանը, և մկրտուեցաւ Յովհաննէսէն։

Ը Ո՛վ սուրբ կոյս ստուածածին, որ անբացատրելի էակին ծնունդ տուիր, յաւիտեան օրհնեալ ես։

Որ որովայնիդ մէջ կրեցիր բանն Ստուածը, որ սկիզբէն հօր Ստուծոյ հետ ստեղծագործութեան մասնակցեցաւ, յաւիտ։

Եղեկիէլ մարգարէն զքեզ տեսաւ կանուխէն իբրև երկինք տանող ճամբուն դուռը և իբրև անփոփոխ կին, յաւիտ։

Ո՛վ անակիզբ և հօր հետ էակից եղող բանդ Ստուած, այսօր մարդկային ազգին յայտնուեցաւ սուրբ կոյսէն քու հրաշափառ ծնունդդ։

Ո՛վ տէր, երկիրը հրճուեցաւ քու յայտնուելուդ վրայ, և Ադամը նորոգուեցաւ իր առաջին յանցանքէն, իր մեղքէն։

Հովիւները երկրի վրայ կը փառաւորէին քու գալուստդ, որ ամէնուն փրկութիւն եղաւ, երբ երեւցար մեզի՝ քու արարածներուդ։

Ց Այսօր բարձրեալ բանն Ստուած ինքզինք յայտնեց, անբան անասուններու մսուրին մէջ նստած, թէ գառնուկն է և երկնաւոր հացն է։

Այսօր երկնից հրեշտակները կը խայտան տեսնելով ահաւոր, սարսափելի և հրաշալի ծնունդը, որ աշխարհի լոյս յայտնուեցաւ։

Երբ հրեշտակները վար իջան փառաբանութիւն տալու համար, երջանիկ հովիւները կը տեսնէին որ լուսեղէն ամպ մը սիւն կը ձեւացնէր բոցեղէն պանդոկին մէջ։

ՃԵ Անմարմին հրեշտակները կը գովաբանեն զքեզ։

ո՛վ հայր, որ ամէն ժամանակներէն կանուխ ես, կ՚երդեն և կ՚աղաղակեն թէ աստուածներուն աստուածը և տէրերուն տէրը մարդոց փրկիչ եղաւ։

Քու միածին որդիդ ղրկեցիր որպէսզի սուրբ կոյսէն մարմին առնէ և առանց անմաքրութեան ծնի աստնապական որովայնէն, մեր նեղութիւնները կրելով։

Երուսաղէմի մէջ հեթանոսներուն համար ամենամեծ պարգև մը, շնորհք մը երևցաւ, որովհետև յաւիտենական արարիչը մարդ ըլլալով զամենքը կը հրաւիրէ որդեգիր ըլլալ իր կեանքին։

ԿԱՆՈՆ ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

Ա՛Հ Անեղանելի բնութիւն որ յեռութեանդ ես ընդ
Բ՚Յ հոր, ծնար ի սրբոյ կուսէն, զքեզ բարեբանեմք
Գ՚Ա սարարչակից հոր:

Անեղանելի սարարող որ վասն մեր մարմնացար եւ ցնծութիւն աշխարհի յայտնեցար, զքեզ:

Մկրտեցար ի յորդանան ի յոլհանէ, աղաւնակերպ սուրբ հոգւոյն վկայեալ երկնային ձայնիւն, զքեզ:

Բանն առաքեալ ի հոր որ վասն մեր մարմնացաւ, եւ ցնծութիւն աշխարհի յայտնեցաւ, զքեզ բարեբանեմք աստուածածին կոյս:

Զի որում ոչն հանդուրժէին բոցանոյլ սերոբէքն, նա բնակեցաւ ի հում որովայնի, զքեզ:

Ցորմէ սարսեալ դողային փայլա՛նացայոյ ի լուսոյն, ի գիրկս հո զնա ընկալար, զքեզ:

Լոյսդ որ ի հոր առաքեցար յորժամ իջեր ի յերկնից եւ մարմնացար ի սրբոյ կուսէն, դու ես գառն Աստուծոյ եւ որդի հոր:

Այսօր յայրին ընծայեցար փրկիչ եւ ի մոգուցն երկրպագեցար, եւ հովուացն տեսեալ ասէին, դու:

Ի նմանութիւն աղաւնոյ տեսեալ զհոգին սուրբ յոլհանէս, աղաղակեր ասելով, սա է գառն Աստուծոյ եւ որդի հոր:

Ա՛Հ Փառաւորեալ Աստուած սքանչելի մեծագործու-
Բ՚Յ թեամբ, եկիր ի փրկել զարարածս հո, Աստուած
հարցն մերոց:

Ծնար ի կուսէ անճառելի բանդ, ի հօրէ ոչ մեկնեցար, օրհնեմք զքեզ անհասանելի լոյս, Աստուած:

Երեւեցար յաւիտեանի որ իջեր ի յորդանան մկրտիլ ի յովհաննէ, որ զջուրսն արբեցեր, արբեա զմեզ ի մեղաց մերոց, Աստուած:

Ամենայն զորմէ տեառն զնա անդադար, զանսկիզբն Աստուած զանյաղթելի զբազաւորն օրհնեցէք զովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ էն փառօք ի յերկինս անսկզբնակից որդին, իջեալ ի յերկնից մարմնացաւ ի կուսէն, օրհ:

Ընծնեալն ի սուրբ կուսէն զեղեալն յանբծանից մըսուր, եւ զմկրտեալն ի սուրբ յորդանան, օրհ:

Զէակիցն հօր եւ որդւոյ զսուրբ հոգին, զնորոգողն եւ զանսպառ աղբիւրն լուսոյ, որ լուսաւորեացն զմեզ. օրհ:

Զկուսութիւնդ քո աստուածածին անուրաս զոր ոչ բոցակիզեաց հուր աստուածութեանն, մեծացուցանեմք:

Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ Քրիստոս Աստուած, եւ փրկիչ անձանց մերոց, մեծացուցանեմք:

Անհասանելի տիրական յայտնութիւն աւետարանի ծագեցաւ, անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Զոհարեալ ի բարձանց եւ մարմնացար ի կուսէն, որ նստիրդ ի քրէս արարիչդ արարածոց:

Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ, արգանդ կուսին ժուժկալեալ ընդունիլ զքանզդ երկնային:

Ցորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին մերձենալ, ի խանձարուրս պատեցար եւ եդար ի մսուր անբանից:

ՏԷ Հրաշալի բարբառէ երկնաւոր զօրացն, ճնչմամբ օրհնեալն զանմահ բազաւորութիւնն :

Անճառ ծնունդն փառօք երեւեալ, եւ աստղն լուսապայծառ հովանի էր այրին :

Բանն բազմեալ յանբանից մառր, եւ մոգքն հեսեւէին ծագմամբ լուսափայլ աստեղն :

ՃԾ Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս, որ
ԲԻ ցօղեցեր ի մեզ զցօղն երկնային, զքեզ բարեբա-
Ի նեմք աստուածածին կոյս :

Անկէզ մորենի եւ արօքէ հողեղէն սուրբ կոյս, բանզի պտուղն կենաց ի քեզ տուաւ մեզ, զքեզ :

Անիծից լուծիչ եւ բաւիչ մեղաց սուրբ կոյս, որ զանցաանելիս էից ի գիրկս քո բարձեր, զքեզ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ անեղ բնութիւն, որ հօր Աստուծոյ հետ նոյն բնութիւնը ունիս, սուրբ կոյսէն ծնար. կը գովաբանենք զքեզ, որ ստեղծագործութեան մասնակցեցար հօր Աստուծոյ հետ :

Ո՛վ ստեղծող որ մէկէ մը ստեղծուած չես, մեզի համար մարմին առիր և աշխարհի ուրախութիւն յայտնուեցար. կը գովա :

Յորդանանու մէջ Յովհաննէսէն մկրտուեցար, սուրբ հոգին աղաւնիի պէս երեւելով վկայութիւն տուաւ երկնաւոր հօր ձայնին հետ. կը գովա :

Բանն Աստուած հօրմէն ղրկուեցաւ և մեզի համար մարմին առաւ, և աշխարհի ուրախութիւն յայտնուեցաւ. կը գովաբանենք զքեզ, ո՛վ աստուածածին կոյս

Որովհետև քու որովայնիդ մէջ բնակեցաւ նա որ ամբողջ չէին կրնար դիմանալ բոցափայլ սերոբէները. կը գովա։

Քու գրկիդ մէջ ընդունեցիր այդ կայծակնացայտ լոյսը, որմէ սարսափահար կը դողային, կը գովա։

Դու Աստուծոյ գառնուկն և որդին ես, ո՛վ լոյս, որ հօրմէն ղրկուեցար երբ երկինքէն իջար և սուրբ կոյսէն մարմին առիր։

Ո՛վ փրկիչ, այսօր պանդոկին մէջ նուէրներ ընդունեցիր, և մոգերուն երկրպագութիւնը, և հովիւները տեսան ու ըսին. դու հօր Աստուծոյ գառնուկն ու որդին ես։

Յովհաննէս սուրբ Հոգին աղաւնիի կերպարանքով տեսնելով, կ՚աղաղակէր ու կ՚ըսէր. ահա Աստուծոյ գառնուկն և հօր որդին։

Հրաշալի մեծագործութիւններով փառաւորուած Աստուած, եկար փրկելու քու արարածներդ, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Ո՛վ անպատմելի բանդ Աստուած, կոյսէն ծնար, հօր Աստուծմէ չզատուեցար, կ՚օրհնենք զքեզ անըմբռնելի լոյս, ո՛վ մեր։

Աշխարհի վրայ երեւցար, Յորդանան իջար Յովհաննէսէն մկրտուելու, դուն որ ջուրերը արբեցիր, արբէ՛ զմեզ մեր մեղքերէն, ո՛վ մեր։

Տիրոջը բոլոր արարածները միշտ օրհնեցէք զինքը. օրհնեցէք, գովեցէք և փառաւորեցէք ի սպառ անսկիզբ Աստուածը, երկնային անյաղթելի թագաւորը։

Հօր Աստուծոյ պէս անսկիզբ եղող որդին, որ իր փառքովը երկինքն է, և երկինքէն եկնելով կոյսէն մար-

մին առաւ, օրհնեցէք, գովեցէք և փառաւորեցէք ի սպառ։

Զայն որ սուրբ կոյսէն ծնաւ, անբան անասուններու մսուրին մէջ դրուեցաւ և սուրբ Յորդանանու մէջ մկրտուեցաւ, օրհնե։

Սուրբ հոգին որ հօր Աստուծոյ և որդի Աստուծոյ հետ նոյն էութիւնը ունի, կը նորոգէ և լոյսի անապառելի աղբիւր է, որ լուսաւորեց զմեզ, օրհնեցէք, գովեցէք և փառաւորեցէք ի սպառ։

Ո՛վ անարատ աստուածածին, կը փառաւորենք քու կուսութիւնդ, որ չայրեցաւ աստուածութեան կրակէն։

Քրիստոս Աստուած արդանդիդ մէջ բնակեցաւ առանց ապականութեան, և փրկեց մեր անձերը, կը փառաւորենք զքեզ։

Տէրունական անըմբռնելի կարգադրութեամբ յայտնութիւն մը եղաւ աշխարհի. երկրպագութիւն ընենք անմահաչելի լոյսին։

Դու որ արարածները ստեղծեցիր և քրօքէներուն վրայ կը նստէիր, բարձունքէն վար իջար և կոյսէն մարմին առիր։

Երկինք անկարող էր կրելու, բովանդակելու քու փառքդ, դուն որ անմահ ես և ո՛չ մէկէն ստեղծուած ես, բայց կոյսին արդանդը բաւեց ընդունելու զքեզ, որ երկնաւոր դանձ ես։

Լաթի կտորուանքներու մէջ փաթթուեցար և անբան կենդանիներու մսուրին մէջ դրուեցար, դուն՝ որմէ սերոբէները սարսռալով չէին համարձակիր մօտենալ։

Երկնային զօրքերուն զարմանալի ձայները աղաղակելով կ՝օրհնէին անմահ թագաւորութիւնը։

Անպատմելի ծնունդը փառաւոր երեւցաւ, և լուսափայլ աստղը հովանի էր պանդոկին վրայ։

Բանն Աստուած անբան անասուններու մսուրին մէջ նստաւ, մոգերը կը հետեւէին լուսափայլ աստղին ծագման։

ՃԵ Ո՛վ սուրբ կոյս, լուսեղէն սիւն և հովանաւոր ամպ, որ երկնային շաղը մեր մէջ ցօղեցիր, կը գովաբանենք զքեզ, աստուածային կոյս։

Ո՛վ սուրբ կոյս, դուն այն մորենին ես որ չէր այրեր, և հողեղէն սերոբէ ես, որովհետև կեանք տուող պտուղը քեզմով տրուեցաւ մեզի, կը գովա։

Անէծքը քակող և մեղքերը սրբող սուրբ կոյս, որ քու գրկիդ մէջ կրեցիր զայն, որուն չէին կրնար բաւական ըլլալ բոլոր արարածները, կը գովա։

ԿԱՆՈՆ ՈՒԹԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐՆ

ԱՀ Լոյս ի լուսոյ ի հօրէ առաքեցար եւ մարմնա-
ԳՅ ցար ի սուրբ կուսէն, զի վերստին նորոգեսցես
ԺԲ զապականեալն Ադամ:

Դու Աստուած ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան
երջեցար, եւ փրկեցեր զտիեզերս յանիծից Ադամայ:

Քեզ ի յերկնից վկայեալ հօր էր ձայն, ասէ՝ դա է
իմ որդի, եւ սուրբ հոգին զքեզ յայտնեաց աղաւնա-
կերպ երեւմամբ:

Զքեզ որ հոգւով եւ հրով մաքրեցեր զմարդկան աղ-
տեղութիւն, որպէս զԱստուած եւ զփրկիչ ամենեքեան
օրհնեսցուք:

Փրկիչն երեւեցաւ եւ զաշխարհս ապրեցոյց ի պատ-
րանաց բնաւորոյն, որդեգրութիւն ընդունելով ի ձեռն
մկրտութեան:

Զրով կիզու զմեղս մեր այսօր՝ երեւեալ ապրեցու-
ցիչն, եւ զովացուցանէ զաշխարհս աստուածային շը-
րովն:

Զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան
ի գետն, եւ ինքեան իշխանութեամբ զամենեսեան ապ-
րեցոյց:

Զհին մարդն նորոգելով փրկիչն ի մկրտութիւն գայ
այսօր, զի զապականեալ զբնութիւնս ջրով նորս գոր-
ծեսցէ, անապականն զգեստս փոխարէն տալով մեզ:

Մկրտի Քրիստոս եւ արքին աստուածն ամենայն եւ
տայ մեզ բողութիւն մեղաց, ջրով եւ հոգւով վերապր-
քելով զմեզ:

Հ Տնօրինեցաւ յարգանդի կուսին իսկակից հօր եւ սուրբ հոգւոյն, բանն առաքեալ ի հօրէ յաղագս նախասեղծ մարդոյն բառնալով զյանցանս, ժողովուրդք օրհնեցէք զառաքեալն ի հօրէ զԱստուած հարցն մերոց:

Նախայաւիտեան որդին փառակից հօր եւ սուրբ հոգւոյն, ի յորդանան եկն այսօր մկրտիլ ի յովհաննէ, կերպացեալ իմովս յաղագս իմ զնախահօրն եբարձ ըզմեղս, ժողո:

Մարդասէրն պարգեւեցան ընտրեալ աղաւնակերպ իջմամբ սուրբ հոգւոյն զուրցն արքութեան, եւ հայր ի վերուստ վկայեալ կրկնակի ծնունդեամբ դա է որդի իմ սիրելի, միաբան եւ մեք օրհնեսցուք զառաքեալն ի հօրէ զԱստուած հարցն մերոց:

Զտէր օրհնեցէք բարձր արարքք զնա յաւիտեան:

Արարիչն երկնի եւ երկրի Աստուած եւ մարդ գոլով, երեւեալ ի հոսանսն յորդանանու աստուածախառն մարմնով, լուսոյ զտիեզերս ի մեղաց, բարձր:

Միաբանութեամբ օրհնեցէք քահանայք եւ ժողովուրդք զամենասուրբ զերրորդութիւնն, զհամագոյ եւ զմի աստուածութիւնն, բարձր:

Ս Ցանկան փառաց խոնարհեցար ի մեր բնութիւնս բանդ Աստուած, եւ մարմնացար ի արքոյ կուսէն:

Եւ ծնար ի սուրբ կուսէն անապական մարմնով, զքեզ անդադար բարեբանեալ մեծացուցանեմք:

Այսօր զեկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան, միաբանութեամբ ամենեքեան մեծացուցանեմք:

Ա Պատկերակիր եղեր հողեղէն բնութեանս, տնօրինեցար յարգանդի կուսին բանդ Աստուած, զմերս վերանորոգել պատկեր:

Մերկացեալ ի նաւակմանէ նախասեղծին զփառս

միւսանգամ վերսին շնորհելով զմերս վերանորոգել ի փառս :

Մկրտեալ ի յորդանան ի յովհաննէ , աստուածային բնութեամբ մարմնովն զոր ի մէջ էառ , զմեզ լուսաւորելով աստուածային ծագմամբ :

Ը Զանբաժանելի զբանն հօր եւ զանսկիզբն նորա զորդին որ ի յորդանան այսօր զմեզս մեռոյց եւ զաշխարհս լուսաւորեաց , բարեբանելով միշտ յաւիտեան :

Որ ի հօրէ վկայեալ որդին՝ յայտնեալ հոգին իջեալ ձեռնադրեր կարապետն , զի եւ մեք օրհնեսցուք զերրորդութիւն միասնական , բարեբա :

Որ ի հրեշտակաց օրհնաբանեալ Աստուած , ի հսանանն յորդանանու տեսեալ յովհաննէս ասէր , ահա գառն Աստուծոյ որ վկայի ի սուրբ հոգւոյն, զոր օրհնեսցուք միշտ յաւիտեան :

Ձ Անսկիզբն Աստուած բանդ որ ի հօրէ առաքեցար , ընդ ժամանակաւ լինել հաճեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն վասն մերոյ փրկութեան , այսօր մկրտիլ ի յորդանան ի յովհաննէ , բառնալով զյանցանս առաջին նախասահման մարդոյն :

Անեղանելիդ Աստուած բանդ անմեկնելիդ ի հօրէ , ընդ ժամանակաւ լինել հաճեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն Աստուած եւ մարդ յայտնեալ, այսօր մկր:

Զորեքկերպեան կենդանեացն զխորհուրդ քարոզեաց ամլորդին՝ տեսանելով սուրբ զհոգին աղաւնակերպ իջմամբ ի վերայ ջուրցն , աղաղակէր ասելով , ահա գառն Աստուծոյ որ ի հօրէ վկայեցաւ դա է որդի իմ սիրելի , ընդ որում ես հաճեցայ :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ լոյս Քրիստոս, լոյս հօրմէն ղրկուեցար և սուրբ Կոյսէն մարմին առիր, որպէսզի դարձեալ նորոգես ապականած Ադամը։

Ո՛վ Աստուած, երկրի վրայ երեւցար և մարդոց հետ պատեցար, և բոլոր աշխարհը փրկեցիր Ադամի անէծքէն։

Քու հօրդ ձայնը քեզի համար վկայութիւն տուաւ երկինքէն, ըսաւ՝ ատիկա է իմ որդիս, և սուրբ հոգին զքեզ յայտնեց աղաւնիի պէս երեւելով։

Ամենքս իբրև Աստուած և իբրև փրկիչ օրհնենք զքեզ որ հոգիով ու կրակով մաքրեցիր մարդոց աղտեղութիւնը։

Փրկիչը երեւցաւ և այս աշխարհը ազատեց թշնամիին խաբէութենէն, մկրտութեան միջոցաւ աստուածային որդեգրութիւն շնորհելով մեզ։

Այսօր ազատարարը երեւելով, ջուրով կ՚այրէ մեր մեղքերը, և աշխարհը կը զովացնէ աստուծային ջուրով։

Փրկիչը Յորդանան գետին մէջ ջախջախեց սատանային գլուխը, և իր սեփական իշխանութեամբ ազատեց զամենքը։

Այսօր փրկիչը մկրտուիլ կուգայ հին մարդը նորոգելով, որպէս զի մեր ապականած բնութիւնը ջուրով նորցնէ, ի փոխարէն անապական հագուստ տալով մեզի։

Քրիստոս կը մկրտուի և բոլոր արարածները կը արբուին, և մեղքերու թողութիւն կուտայ մեզ, ջուրով և հոգիով զմեզ դարձեալ արբելով։

Գ. Բանն Աստուած, հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ նոյն բնութիւնն ունենալով, կոյսին արգանդին մէջ զետեղուեցաւ ըստ կանուխ անօրէնութեան, հօրմէն ղրկուեցաւ սկզբնական մարդուն՝ Ադամին համար, անոր յանցանքը վերցնելու. ո՛վ ժողովուրդներ, օրհնեցէք մեր հայրերուն Աստուածը՝ որ հօրմէն ղրկուեցաւ։

Որդին, որ ամէն ժամանակներէ առաջ կայ, և հօր Աստուծոյ և սուրբ Հոգւոյն հետ նոյն փառքն ունի, այսօր Յորդանան եկաւ Յովհաննէսէն մկրտուելու, ինձ համար իմ մարմինս առնելով՝ նախահայր Ադամին մեղքը վերցուց. ո՛վ ժողովուրդներ։

Յորդանանու սուրբ ջուրերուն մաքրողական շընորհք տրուեցաւ սուրբ Հոգիին աղաւնիի պէս իջնելուն վրայ, և հայր Աստուած վերէն վկայեց թէ ատիկա իմ սիրելի որդիս է իր կրկին ծնունդով (իբրև մարդ և իբրև Աստուած). մեք ալ միաբերան երդենք մեր հայրերուն Աստուածը՝ որ հօրմէն ղրկուեցաւ։

Ի սպառ օրհնեցէք Տէրը և փառաւորեցէք զայն։

Երկինքն ու երկիրը ստեղծողը, Աստուած և մարդ ըլլալով միանգամայն, Յորդանանու հոսանքին մէջ երթեւեցաւ իր աստուածախառն մարմինով և բոլոր աշխարհը իր մեղքերէն լուաց, փառաւորեցէք զայն ի սպառ։

Ո՛վ քահանաներ և ժողովուրդներ, միաբերան օրհնեցէք ամենասուրբ, համագոյակից երրորդութիւնը և մի աստուածութիւնը, փառաւորեցէք զայն ի սպառ։

Դ. Ո՛վ բանդ Աստուած, քու անպատմելի փառքէդ մեր բնութեանը խոնարհեցար, և սուրբ կոյսէն մարմին առիր։

Եւ առանց ապականութեան մարմինով ծնար սուրբ

կոյսէն, անդադար գովաբանելով կը փառաւորենք ըզքեզ։

Ամենքս միաբերան կը փառաւորենք զքեզ, որ այսօր եկար մարդկային ազգը փրկելու։

7 Ո՛վ բանդ Աստուած, մեր հոգեղէն բնութեան պատկերը քու վրադ առիր, կոյսին արգանդին մէջ զետեղուեցար աստուածային անօրէնութեամբ, մեր պատկերը վերանորոգելու համար։

Երկրորդ անգամ դարձեալ մեզի շնորհելու այն փառքը զոր Ադամ կորսնցուց պտուղը ճաշակելով, և մեր բնութիւնը կրկին փառաւորելու։

Աստուածային բնութեամբը, ինչպէս նաև մեզմէ առած մարմինովը Յովհաննէսէն մկրտուեցաւ Յորդանանու մէջ, և զմեզ լուսաւորեց իր աստուածային ծագումով։

8 Միշտ և յաւիտեան գովաբանենք անբաժանելի բանն Աստուածը և հօր Աստուծոյ անակիզը որդին, որ այսօր Յորդանանու մէջ մեղքերը մեռցուց և աշխարհը լուսաւորեց։

Յովհաննէս Կարապետ ձեռք դնելով մկրտեց զայն որուն համար Հայրը վկայեց թէ իմ որդիս է, և սուրբ հոգին յայտնապէս իջաւ, որպէսզի մեք ևս օրհնենք անբաժան երրորդութիւնը, միշտ և յաւիտեան գովաբանելով։

Յովհաննէս Յորդանանու հոսանքին մէջ տեսնելով զԱստուած որ հրեշտակներէն կը գովուի և կ՚օրհնուի, կ՚ըսէր. ահա Աստուծոյ գառնուկը որուն վկայութիւնը կուտայ սուրբ Հոգին. մենք ևս օրհնենք միշտ և յաւիտեան։

ՃԵ Ո՛վ անսկիզբ բանդ Աստուած, որ հօր Աստուծմէ ղրկուեցար, հաճեցար ժամանակի ենթարկուիլ, և մարմին առիր սուրբ կոյսէն մեր փրկութեան համար. այսօր Յորդանանու մէջ Յովհաննէսէն մկրտուեցար՝ առաջին անգամ ստեղծուած մարդուն յանցանքը վերցնելով։

Ո՛վ բանդ Աստուած, որ ո՛չ մէկէն ստեղծուեցար, և հօր Աստուծմէն անբաժան ես, հաճեցար ժամանակի ենթարկուիլ և սուրբ կոյսէն մարմին առիր, իբրև Աստուած և իբրև մարդ յայտնուելով. այսօր Յորդա։

Ամուլ Եղիսաբէթի որդին Յովհաննէս՝ սուրբ Հոգին աղաւնիի պէս Ջուրերուն վրայ իջած տեսնելով, կանխաւ քարոզեց չորեքկերպեան կենդանիներուն խորհուրդը, (որովհետև ինչպէս որ այդ կենդանիները Յովհաննու Յայտնութեան մէջ կը յայտնեն աշխարհի փրկութեան համար մորթուած դառնուկը), այսպէս ալ Յովհաննէս մկրտիչ կ'աղաղակէր և կ'ըսէր. ահա Աստուծոյ գառնուկը, որուն վկայեց հայր Աստուած թէ իմ սիրելի որդիս է, որուն հաճած եմ ամէն կերպով։

ԿԱՆՈՆ

ՔԱՌԱՆՕՐԵԱՅ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ Ի ՏԱՃԱՐՆ

(ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ)

ԱՀ Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան բանդ,
ԿՅ այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս, վասն
ԺԷ փրկութեան հեթանոսաց:

Որ յանարուեստս արար նստիս բարեբանեալդ ի հրեշտակաց, այսօր ի սիմէօնի բառնալով ի գիրկս, որ ընծայեցես զմեզ ի կեանսդ յաւիտենից:

Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա եւ զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:

ԳԱ Այսօր անսկզբնական ծնունդդ հայրական ծոցոյ բանն եկաւորեալ ի տաճարն ընծայէ զարարածս հօր ի յերկինս:

Այսօր բաձրեալ եղեւ ի գիրկս ծերունւոյն, որ բանիւ զարարածս բարձեալ ունի, օրհնաբանեցուք:

Այսօր եւ մեք հաւատացեալքս ընդ ծերունւոյն սիմէօնի, զբանն համագոյ հօր եւ սուրբ հոգւոյն օրհնա:

Այսօր ի տաճարն եկեալ կենարարն, եւ ի գիրկսն սիմէօնի զգուեցաւ, զոր խնդութեամբ ընկալաւ երուսաղէմ:

Այսօր երկիրս երկինք անուանեցաւ զի տէրն տէրանց իջեալ յերկնից ի յերկիր, եւ ընծայիլ յանձն առնու ի գործոյ ձեռաց իւրեանց :

Այսօր հեթանոսաց լոյս ծագեցաւ Քրիստոս Աստուած, եւ փառք իւրում ժողովրդեանն Իսրայէլի :

գկ Այսօր ի տաճարն եկիր փրկիչ եւ ծերունւոյն ի գիրկս ընկալեալ ասէր, արդ արձակես զծառայս քո տէր :

Այսօր աշխարհի ցուցար լոյս, եւ փրկութիւն տիեզերաց Քրիստոս Աստուած, որ մարդասէրդ ես կեցո՛ զմեզ :

Այսօր իմանալի արեգակն՝ որ ծագեցաւ տիեզերաց Քրիստոս Աստուած, որ մար :

Ի սկզբանէ բանն Աստուած մարմնացաւ ի կուսէն, այսօր զգուեցաւ ի տաճարին :

Խայտայր ալեօքն ծերունին Աստուածորդւոյն ի գիրկս իւր, եւ օրհնէր զԱստուած ասելով :

Արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկողդ Աստուած :

ՀԵ Օ՛հնեմք զքեզ որ առաքեցար ի հօրէ անճառելի
տ՝ բանդ Աստուած՝ յանձն առեր մարմնանալ ի սրբոյ կուսէն, Աստուած հարցն մերոց :

Այսօր եկիր ի տաճարն անհասանելի փրկիչ եւ 'ի գիրկսն սիմէօնի զգուեցար, Աստուած :

Ուստի եւ սիմէօն հոգեւոր հնչմամբն աղաղակեր, արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, Աստուած :

գ Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Զծնեալն յամենասուրբ յորովայնէ յանարատս ի կուսէն, օրհ :

Զեկեալն այսօր ի տաճարն՝ զընկալեալն ի գիրկսն սիմէօնի , օրհ :

Ը Արդ. Հրաբկական երեւեալ այսօր սիմէօն , զԱստուածորդին ի գիրկս իւր բարձեալ մարմնով , զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն :

Հոգւոյն գոչեր , ցնծայր ալեօքն ծերունին ասելով՝ սա է բազաւորն անմահ , զոր :

Արտասուելով աղերսեր՝ արձակեա՛ զիս ի խաղաղութիւն , անարատ ծնողի քո բարեխօսութեամբ , զոր :

Ո Որոյ առեալ հրամանն ի սուրբ հոգւոյն ոչ տեսանել զմահ մինչեւ տեսցէ զօծեալդ , տէ՛ր աղօթիւք ծերոյն ողորմեա :

Որոյ ընկալեալ ի գիրկս իւր զօծեալդ եւ հայցեր ի կենացդ զմահն եւ արձակիլ ի խաղաղութիւն , տէ՛ր աղօ:

Ցորոյ այսօր ի գիրկսն զգուեցար եւ կատարեցեր ըզփափաքումն ընծայելոյ քո ի տաճարին , տէ՛ր աղօ :

Ս Զոր փառաբանեն ի բարձունս իմանալի զորութիւնքն , այսօր ի տաճարն երկիր յընծայումն Քրիստոս , որ ընծայես զարարածս բարձրելոյ քում հօր :

Ի գիրկս մարմնով բարձեալ եղեր ի ծերունւոյն , որ բանիւ զարարածս բարձեալ ունի Քրիստոս , որ վասրն մեր մարմնացար ի արքոյ կուսէ :

Վասն որոյ եւ մեք ընդ սիմէօնի գոչեսցուք որ ի հօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ եւ կեանք , փա՛ռք քաղցեալ քո տէ՛ր :

ԺԸ Անսկիզբն բանն յանսկզբնական ի հօրէ եւ ընկզբնաւորեալ ի կուսէն մարմնոյ զգեցմամբ , բովանդակելով յորովայնի եւ ընդ հօր գոլով , եւ սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած եւ մարդ :

Մեռալ ընդ օրինօք անմիւթականն՝ հողանիւթ գոլով, զի զհողածնեալս հօրն ընծայեցեալ ասուածորդին որ ի ծոց հօր, տղայ խառասնօրեայ բառնի ի գիրկս ծերունւոյն, եւ յայսմապէս ծանուցանի Ասուած եւ մարդ:

Վասն որոյ եւ սիմէօն ցնծայր հոգւովն աղաղակեր ի տաճարին, արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի ընդունաւեր տեսի զփրկողդ՝ Ասուած եւ մարդ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ բանդ Ասուած, որ ամէն ժամանակներէն առաջի կանուխ կայիր, կոյսէն մարմին առնելով, այսօր տաճարը եկար մովսիսական օրէնքը կատարելու հեթանոսները փրկելու համար։

Դու որ անձեռագործ աթոռի վրայ կը նստիս և հրեշտակներէն կը գովաբանուիս, այսօր Սիմէոն գրկեց զքեզ, որպէսզի քու յաւիտենական կեանքիդ նուիրես զմեզ։

Դու որ կապուածները կ՚արձակես և ամենուն պարգև կուտաս, այսօր ծերունիին խնդրանքով յաւիտենական կեանքիդ մէջ մահուան կապերէն արձակէ՛ զիս ալ, որ յոյժ մեղաւոր եմ։

Հայրական ծոցին ծնունդը, անսկիզբ բանն Ասուած այսօր տաճարը գալով՝ արարածները կը նուիրէ երկինք հօր Ասուծոյ։

Այսօր ծերունիին գրկին մէջ կրուեցաւ նա որ իր խօսքով կը կրէ արարածները, օրհնեա՛նք զայն։

Մենք հաւատացեալներս ալ այսօր Սիմէոն ծերունին հետ օրհնե՛նք բանն Աստուծը, որ հօր Աստուծոյ և հոգի Աստուծոյ հետ նոյն գոյութիւնը ունի։

Այսօր տաճար գալով Սիմէոնի գրկին մէջ փայփայուեցաւ կեանք տուողը, զոր ուրախութեամբ ընդունեց Երուսաղէմ։

Այսօր այս աշխարհը երկինք կոչուեցաւ, որովհետև տէրերուն տէրը երկինքէն երկիր իջաւ, և յանձն առաւ իրեն նուէր հօր Աստուծոյ մատուցուիլ իր արարածներուն ձեռքով։

Այսօր Քրիստոս Աստուած հեթանոսներուն լոյս և Իսրայելի իր ժողովուրդին ալ փառք յայտնուեցաւ։

Ո՛վ փրկիչ, այսօր տաճարը եկար, և ծերունին զքեզ իր գրկին մէջ ընդունելով կ՚ըսէր. ո՛վ տէր, այլ ևս այս աշխարհէն ճամբէ՛ զիս՝ քու ծառադ։

Այսօր լոյս յայտնուեցար աշխարհի, և տիեզերքին ալ փրկութիւն, ո՛վ Քրիստոս Աստուած. ապրեցո՛ւր զմեզ, դու որ մարդիկը կը սիրես։

Այս հոգեւոր արեւը՝ Քրիստոս Աստուած ծագեցաւ ընդհանուր աշխարհին համար, ապրեցուր զմեզ դու որ մարդիկը կը սիրես։

Բանն Աստուած նախ մարմին առաւ կոյսէն, այսօր ալ փայփայուեցաւ տաճարին մէջ։

Ծերունին իր ճերմակ մազերով կը ցնծար, Աստուածորդին գիրկն առած, և Աստուծոյ գոնութիւն կը մատուցանէր, ըսելով։

Արդ, կրնաս, ո՛վ տէր, զիս՝ քու ծառադ խաղաղութեամբ ճամբել այս աշխարհէն քու խօսքիդ համեմատ, որովհետև աչքերս տեսան զքեզ, փրկող Աստուածդ։

Է Կ'օրհնեմք զքեզ անբացատրելի բանդ Աստուած, որ հօր Աստուծմէ զրկուեցար սուրբ կոյսէն մարմին առնելու, ո՛վ մեր հայրերուն Աստուածը։

Ո՛վ անըմբռնելի Փրկիչ, այսօր տաճարը եկար, և Սիմէոնի գրկին մէջ փայփայուեցար, ո՛վ մեր։

Ուստի Սիմէոն ալ հոգեւոր ձայնով կ'աղաղակէր. արդ, կրնաս, ո՛վ տէր, զիս՝ քու ծառադ խաղաղութեամբ ճամբել այս աշխարհէն քու խօսքիդ համեմատ։

Օրհնեցէք տէրը, և ի սպառ փառաւորեցէք զայն։

Որ անարատ կոյսին ամենասուրբ որովայնէն ծնաւ, օրհ։

Որ այսօր տաճարը եկաւ և Սիմէոնի գրկին մէջ ընդունուեցաւ, օրհ։

Ը Այսօր Սիմէոն իբրև քրմական աթոռ երեւցաւ, և իր գրկին մէջ կրեց՝ մարմնով Աստուածորդին, զոր երկնային զօրքերը երկնից մէջ չարունակ կը փառաւորեն։

Ծերունին հոգիովը կ'աղաղակէր, ճերմակ մազերովը կը ցնծար, և կ'ըսէր. սա՛ է անմահ թագաւորը, զոր երկնային։

Կուլար և կը պաղատէր. խաղաղութեամբ ճամբէ՛ զիս այս աշխարհէս, քու մաքուր ծնողիդ բարեխօսութեամբ, զոր երկնային։

Ը Սիմէոն սուրբ հոգիէն հրամանաւած էր մահը չտեսնել մինչև որ տեսնէ զքեզ՝ օծեալդ. ո՛վ տէր, ծերուկին աղօթքովը ողորմէ՛։

Որ իր գիրկը առնելով զքեզ՝ օծեալդ, և կը խընդրէր մեռնիլ քեզմէ որ կեանք կը պարգեւես, և խաղաղութեամբ ճամբուիլ այս աշխարհէն. ո՛վ տէր։

Որուն գրկին մէջ փայփայուեցար այսօր և կատարեցիր տաճարին մէջ զքեզ Աստուծոյ նուիրելու համար անոր ունեցած փափաքը, ո՛վ տէր։

Ո՛վ Քրիստոս, զոր վերը երկնքին մէջ հոգևոր զօրքերը կը փառաւորեն, այսօր տաճարը եկար Աստուծոյ նուիրուելու, որպէսզի արարածները նուիրես քու բարձրեալ հօր։

Ծերունին գրկին մէջ կրուեցար մարմինով, դու որ խօսքովդ կը կրես արարածները, ո՛վ Քրիստոս, որ մեզի համար սուրբ կոյսէն մարմին առիր։

Ուստի մենք ալ Սիմէոնին հետ կ՚աղաղակենք. փառաւորեա՛լ ըլլայ քու գալուստդ, ո՛վ տէր, որ հօր Աստուծմէ իրրև լոյս և իրրև կեանք յայտնուեցար մեզի։

Անակիզբ բանն Աստուած, անակիզբ հօր Աստուծոյ ծնունդը, կոյսէն սկիզբ առաւ մարմին հագնելով, անոր որովայնին մէջ բովանդակեցաւ, և հօր Աստուծոյ հետ միաց դարձեալ, որոշեալ ժամանակին մէջ ծընաւ իրրև Աստուած և իրրև մարդ։

Աննիւթը, նիւթ ըլլալով, օրէնքին տակ մտաւ. Աստուածորդին որ հօրը ծոցին մէջ է, իրրև քառասնօրեայ մանուկ ծերունին գրկին մէջ կը կրուի որպէսզի հօր Աստուծոյ ընծայէ զմեզ՝ հողէն ծնածներս, և յայտնապէս կը քարոզուի իրրև Աստուած և իրրև մարդ։

Ուստի Սիմէոն ալ հոգիովը կը ցնծար և կ՚աղաղակէր տաճարին մէջ. արդ, կրնաս, ո՛վ տէր, զիս քու ծառադ խաղաղութեամբ ճամբել այս աշխարհէս, որովհետև տեսայ զքեզ, որ հաստատեցիր Փրկիչն ես իրրև Աստուած և իրրև մարդ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Именна. Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013

1489-1494

<< Ազգային գրադարան
NL0060931

<< Ազգային գրադարան
NL0060930

<< Ազգային գրադարան
NL0060929

<< Ազգային գրադարան
NL0060928

<< Ազգային գրադարան
NL0060927

<< Ազգային գրադարան
NL0060926